



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՆՈՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից ուղղվել է 152,600,000 ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ոլորտային աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով շուրջ 4700 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների **տրամադրվել է 11,487 աջակցություն:**

Տրամադրված աջակցության ուղղություն	2017թ. ընթացքում տրամադրված աջակցության քանակ
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	464
Ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնոլոգիական դասընթացներ	246
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	10,337
Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում	81
ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ ՁԵՑ գործունեության շրջանակներում	348
Ոլորտային բիզնեսներին աջակցության շրջանակներում դրամաշնորհների տրամադրում	11
Ընդամենը	11,487
Այլ ծրագրեր	
Նոր սերնդի ՀԴՄ-ների արժեքի փոխհատուցման ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներ	126

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 3.3%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 96.7%-ը ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրված աջակցության մարզային բաշխվածքը հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 1,126, Արարատի մարզում՝ 902, Արմավիրի մարզում՝ 410, Գեղարքունիքի մարզում՝ 1,029, Լոռու մարզում՝ 2,328,

Կոտայքի մարզում՝ 1,958, Շիրակի մարզում՝ 888, Սյունիքի մարզում՝ 407, Վայոց Ձորի մարզում՝ 1057, Տավուշի մարզում՝ 1,003, Երևան քաղաքում՝ 379 (*Հավելված 1*):

2017թ.-ի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքները, ըստ առանձին ուղղությունների և աջակցության ծրագրերի, ներկայացված են ստորև.

1. ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում

ՓՄՁ պետական աջակցության ծրագրային ուղղություններով նախատեսված միջոցառումների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համագործակցություն է հաստատել նոր կազմակերպությունների հետ (*մանրամասները ներկայացված են 8-րդ բաժնում*):

2017 թվականի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը համաձայնագրեր է կնքել և համագործակցություն հաստատել հետևյալ կառույցների հետ, որոնց հետ համատեղ կատարված աշխատանքների նկարագրությունները և ձեռք բերված արդյունքները ներկայացված են Հաշվետվության համապատասխան բաժիններում. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Ստարտափ Արմենիա հիմնադրամ և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» (SMEDA) ծրագիր, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն, ՌԴ Նորարար տեխնոլոգիաների կենտրոն:

Ա.թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ն առաջինը Հայաստանում ստացավ Որակի կառավարման եվրոպական հիմնադրամի հավաստագիր (EFQM): Նախաձեռնությունն իրականացվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից ԵՄ աջակցությամբ իրականացվող «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» (SMEDA) ծրագրի համագործակցության շրջանակում: EFQM-ը միջազգայնորեն ճանաչված որակի կառավարման համակարգ է, որը ներդրված է ոչ միայն եվրոպական աջակցող կառույցներում և ՓՄՁ-ներում, այլև Հին աշխարհամասի խոշորագույն կազմակերպություններում և կորպորացիաներում: Համակարգի ներդրման գործընթացը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գրեթե ողջ աշխատակազմի ներգրավմամբ տևել է ամբողջ տարի՝ ուղղորդված EFQM համակարգի ներդրման գերմանացի խորհրդատուների աջակցությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի բարձրացման, մարզային մասնաճյուղերի աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման ուղղությամբ:

Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի աշխատակիցները մասնակցել են Ավստրիայում, Ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում, Իսպանիայում, Վրաստանում, Ռուսաստանում, Բելգիայում, Գերմանիայում, Հունաստանում և Էստոնիայում կազմակերպված մի շարք դասընթացների, համաժողովների և հանդիպումների:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ/ՃՄՀԳ համատեղ ծրագրի միջոցներով Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի տեխնիկական հնարավորությունների զարգացման նպատակով ձեռք է բերվել համակարգչային և գրասենյակային տեխնիկա:

«Պեղական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պեղական բյուջեից գումար չի հատկացվել:

2. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)

2.1 Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն

«Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի նպատակն է մրցունակ ՓՄՁ-ների հիմնումը Հայաստանում: Ծրագիրը ներառում է ուսուցողական, մասնագիտական խորհրդատվության, տեղեկատվական, ինչպես նաև ֆինանսական աջակցության տրամադրման բաղադրիչներ: Մասնակցելով ծրագրին՝ սկսնակ գործարարները ստանում են բիզնեսի պլանավորման, շուկայավարման, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման գիտելիքներ և համապատասխան գործարար հմտություններ: Ծրագրի դասընթացային փուլի տևողությունը 1 ամիս է, որի ընթացքում փորձառու մասնագետների ուղղորդմամբ սկսնակ գործարարները նախ մշակում են իրենց անհատական գործարար ծրագրերը, որից հետո ձեռնամուխ են լինում դրանց իրականացմանը: Այս ծրագիրն ավելին է քան գործարար ծրագիր մշակելը, այն գործարար մտածողության և վարքագծի հիմնարար սկզբունքները սահմանող գործիքակազմ է: Ծրագիրը սկսվում է ձեռնարկատիրության հաջող մեկնարկի համար անհրաժեշտ հմտությունների զարգացմամբ և գիտելիքների փոխանցմամբ՝ գործարար ծրագրեր ներկայացնելու տրամաբանական ավարտով:

Գաղափարն իրագործելու ընթացքում գործարարները միայնակ չեն, դասընթացային փուլին հաջորդող 6 ամիսների ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի փորձագետները և բիզնես խորհրդատուները ուղեկցում են սկսնակ գործարարներին անհատական խորհրդատվությունների միջոցով և լրացուցիչ աջակցություն տրամադրում՝ կարիքներից ելնելով:

2017 թվականի ընթացքում իրականացվել է 31 ծրագիր¹ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, Գեղարքունիքի մարզի Սևան (2 ծրագիր) և Վարդենիս, Տավուշի մարզի Իջևան (2 ծրագիր), Դիլիջան և Նոյեմբերյան, Լոռու մարզի Վանաձոր (3 ծրագիր), Ստեփանավան (2 ծրագիր) և Սպիտակ, Արագածոտնի մարզի Ապարան, Կոտայքի մարզի Աբովյան, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Սյունիքի մարզի Մեղրի, Գորիս և Սիսիան, Արմավիրի մարզի Արմավիր և Վաղարշապատ, Արարատի մարզի Արտաշատ և Երևան (3 ծրագիր) քաղաքներում, ինչպես նաև Շիրակի մարզի Փանիկ, Վայոց Ձորի մարզի Արենի, Գեղարքունիքի մարզի Կալավան, Արմավիրի մարզի Մյասնիկյան և Սյունիքի մարզի Տաթև գյուղերում: Ընդհանուր առմամբ նշված 10 մարզերում և Երևան քաղաքում իրականացված 31 ծրագրերին մասնակցելու համար դիմել է 875 սկսնակ գործարար, որոնցից հարցազրույցների արդյունքում ընտրվել է 464 մասնակից՝ 198 կին և 266 տղամարդ (*Հավելված 2.1*):

Մարզ քաղաք/գյուղ	Մասնակիցների թիվ	Դասընթացի սկիզբ/ավարտ	Ներկայացված գործարար ծրագրերի թիվ
Երևան քաղաք	13	07.02.2017-06.03.2017	10
Շիրակ մարզ, Գյումրի քաղաք	16	13.02.2017-16.03.2017	12
Գեղարքունիքի մարզ, Սևան քաղաք	15	14.02.2017-03.04.2017	10
Գեղարքունիք մարզ, Սևան քաղաք	15	20.02.2017-03.04.2017	11
Տավուշի մարզ, Իջևան քաղաք	18	20.03.2017-19.04.2017	16
Լոռու մարզ, Վանաձոր քաղաք	20	20.03.2017-25.04.2017	16
Լոռու մարզ, Վանաձոր քաղաք	15	27.03.2017-29.04.2017	12
Տավուշի մարզ,	14	29.03.2017-24.05.2017	10

¹ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, Գեղարքունիքի մարզի Սևան (2 ծրագիր), Տավուշի մարզի Իջևան (2 ծրագիր), Լոռու մարզի Վանաձոր (2 ծրագիր) քաղաքներում ծրագրերն իրականացվել են ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) «Արդյունավետ աշխատանք Հայաստանում երիտասարդների համար. երիտասարդ ձեռներեցներին աջակցություն» համատեղ ծրագրի շրջանակներում:

Երևան քաղաքում իրականացված 3 ծրագրերից 2-ն իրականացվել են ՀՀ ԳՆ ՍԱՊԾ հետ համագործակցությամբ «Սպանդանոցային կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում, իսկ 1-ը՝ «ԹԻ - ԷՍ - ԴԻ» կազմակերպության հետ համագործակցությամբ «Ստարտափների ուսուցման և ֆինանսավորման» ծրագրի շրջանակներում:

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան, Կոտայքի մարզի Աբովյան, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Արարատի մարզի Արտաշատ, Գեղարքունիքի մարզի Վարդենիս, Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքներում, ինչպես նաև Շիրակի մարզի Փանիկ և Գեղարքունիքի մարզի Կալավան գյուղերում ծրագրերն իրականացվել են ԱՄՆ ՄԶԳ-ի §Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID PRP) համատեղ ծրագրի շրջանակներում:

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան, Սյունիքի մարզի Մեղրի, Տավուշի մարզի Դիլիջան քաղաքներում, ինչպես նաև Վայոց Ձորի մարզի Արենի գյուղում ծրագրերն իրականացվել են Ծապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում:

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս և Սիսիան, Արմավիրի մարզի Արմավիր և Վաղարշապատ, Լոռու մարզի Սպիտակ, Ստեփանավան և Վանաձոր քաղաքներում, ինչպես նաև ՀՀ Սյունիքի մարզի Տաթև և Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղերում ծրագրերն իրականացվել են ԵՄ «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանում» ծրագրի շրջանակներում:

Դիլիջան քաղաք			
Լոռու մարզ, Ստեփանավան քաղաք	17	10.04.2017-11.05.2017	15
Սյունիքի մարզ, Մեղրի քաղաք	16	19.04.2017-17.05.2017	12
Վայոց Ձորի մարզ, Արենի գյուղ	10	04.04.2017-19.05.2017	10
Տավուշի մարզ, Իջևան քաղաք	15	21.04.2017-26.05.2017	12
Շիրակի մարզ, Փանիկ գյուղ	14	25.04.2017-05.06.2017	11
Արագածոտնի մարզ, Ապարան քաղաք	14	10.05.2017-12.06.2017	13
Վայոց Ձորի մարզ, Եղեգնաձոր քաղաք	16	15.05.2017-21.06.2017	12
Կոտայքի մարզ, Աբովյան քաղաք	16	23.05.2017- 06.07.2017	12
Գեղարքունիքի մարզ, Կալավան գյուղ	16	19.06.2017-25.07.2017	12
Արարատի մարզ, Արտաշատ քաղաք	14	20.06.2017-29.07.2017	14
Տավուշի մարզ, Նոյեմբերյան քաղաք	14	27.06.2017-30.07.2017	12
Գեղարքունիքի մարզ, Վարդենիս քաղաք	18	17.07.2017-23.08.2017	17
Սյունիքի մարզ, Գորիս քաղաք	16	24.07.2017-30.08.2017	12
Լոռու մարզ, Սպիտակ քաղաք	17	31.07.2017-12.09.2017	15
Արմավիրի մարզ, Արմավիր քաղաք	17	01.08.2017-07.09.2017	13
Երևան քաղաք	9	12.09.2017-24.10.2017	9
Երևան քաղաք	12	13.09.2017-24.10.2017	12
Լոռու մարզ, Ստեփանավան քաղաք	10	25.09.2017-30.10.2017	7
Սյունիքի մարզ, Սիսիան քաղաք	13	25.09.2017-26.10.2017	12
Արմավիրի մարզ, Վաղարշապատ քաղաք	17	26.09.2017-01.11.2017	13
Լոռու մարզ, Վանաձոր քաղաք	18	16.10.2017-25.11.2017	15

Սյունիքի մարզ, Տաթև գյուղ	13	20.10.2017-18.11.2017	12
Արմավիրի մարզ, Մյասնիկյան գյուղ	16	25.10.2017-05.12.2017	11
ԸՆԴԱՄԵՆԸ	464		380

Ծրագրի դասընթացային փուլին մասնակցելու արդյունքում 464 մասնակիցներից 380-ը կազմել են անհատական գործարար ծրագրեր և ներկայացրել ծրագրի Գնահատող աշխատանքային խմբին, որոնցից 162-ը գնահատվել են իրատեսական: Իրատեսական գնահատված 162 ծրագրերից 119-ը ընդգրկվել են «Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն» ծրագրում:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի ընթացքում «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում պետական գրանցում են ստացել և սկսել ձեռնարկատիրական գործունեություն 82 սկսնակ գործարարներ, որոնք ապահովում են 94 աշխատատեղ: Սկսնակ գործարարներից 14-ը հիմնել են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ՝ ստեղծելով 17 աշխատատեղ, իսկ 68-ը անհատ ձեռնարկատերեր են, որոնք ստեղծել են հավելյալ 9 աշխատատեղ: Պետական գրանցում ստացածներից 4-ը՝ 2015 թվականին իրականացված Ծրագրերի մասնակիցներն են, 7-ը՝ 2016 թվականի, իսկ 71-ը՝ 2017 թվականի: Գրանցված ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտ՝ 50%, ծառայությունների ոլորտ՝ 50% (*Հավելված 2.2*):

«Սևան ստարտափ սամիթ 2017»

Ս.թ. հուլիսի 24-31-ը Սևան Ստարտափ հիմնադրամի հետ համատեղ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագրի աջակցությամբ իրականացվել է «Սևան ստարտափ սամիթ 2017» խորագրով միջոցառումը: Միջոցառման նպատակն էր նորարարական, առաջադեմ և հեռանկարային գործարար գաղափարներ ունեցող ստարտափների զարգացումը և դրանց ֆինանսավորման համար հնարավորությունների ստեղծումը: Միջոցառմանը մասնակցել են շուրջ 92 ստարտափ թիմեր, որոնք վրանային ճամբարի սկզբունքով շուրջ մեկ շաբաթ անցկացրեցին Սևանա լճի ափին: Ծրագրի ողջ ընթացքում ինտենսիվորեն տեղի են ունեցել սեմինարներ, թրեյնինգներ, անհատական խորհրդատվություններ, մենթորային միջոցառումներ լավագույն մասնագետների մասնակցությամբ: Միջոցառման շրջանակներում պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել պոտենցիալ ներդրողների և մասնակից թիմերի միջև՝ առաջարկվող գաղափարների համար հնարավոր ներդրումներ ստեղծելու նպատակով, բացի այդ կազմակերպվել են գործարար գաղափարների մրցումներ, որոնց հաղթողները ստացել են ֆինանսական դրամաշնորհներ:

«Սևան ստարտափ սամիթ 2017»-ի գլխավոր մրցանակը՝ 8000 դոլար, ստացավ «Անիքս» ստարտափը: «Անիքս»-ը վիրտուալ օգնական է ցանցային միջավայրում, որն ավտոմատացնում է հաճախորդների սպասարկումը: Այն նաև վիրտուալ ավատար է սպասարկող անձնակազմի համար՝ օգտագործելով ձայնային և տեքստային կապի

միջոցները: 5000 դոլար հատուկ մրցանակի արժանացավ «Թրիպլ»-ի ստարտափը: «Լենց» ստարտափը ստացավ 3000 դոլար մրցանակ: «Աուգմենտ-Ար», «Չեսիֆայ», «Տրիմառան հորթել», «Մատչ-ափ», «Փլեյ ընդ դու» ստարտափները ստացան 2500-ական դոլար: «Սայբեր Մանթիս»-ը՝ 2000 դոլար: «Դևստեք», «Լոկատեք» ստարտափները ստացան 1000 դոլար, «Վի-մոբայլ», «Աուգմենտ-Ար» ստարտափները՝ 500 դոլար: Խրախուսական մրցանակներ ստացան ևս մի քանի ստարտափներ: Նրանցից ոմանք կստանան բիզնես խորհրդատվական ծառայություններ, մյուսների համար փորձառու ընկերությունները կիրականացնեն մարկետինգային աուդիտ: Եղան նաև այնպիսի ստարտափներ, որոնց համար «Սևան ստարտափ սամիթ 2017»-ի գործընկերները պատրաստակամություն հայտնեցին ձևավորել տարբերանշան նպաստել կայքի ստեղծմանը, տրամադրել հատուկ դասընթացներ և այլն:

2.2 ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և ՃՄՀԳ (JICA) համատեղ ծրագրի շրջանակներում ս.թ. մարտի 13-17-ը կազմակերպվել է դասընթացավարների/խորհրդատուների վերապատրաստման դասընթաց (ToT) «Խորացված հայկական «Մեկ Գյուղ Մեկ Ապրանք» մեթոդներ» թեմայով, որի բովանդակությունը հիմնականում կենտրոնացված է նոր ապրանքերի/ծառայությունների ստեղծման, վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի (ՎՎՀԿԿ) հիմունքների, տեղական ապրանքների միջազգային շուկայավարման և զբոսաշրջության զարգացման վրա: Դասընթացին մասնակցել են գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների 11 մասնագետներ (Հավելված 2.3), ինչպես նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի փորձագետներ: Դասընթացի նպատակն էր ներկայացնել հայեցակարգի մեթոդների խորացված ուսումնասիրությունը, որը հետագայում կկիրառվի պոտենցիալ արտահանողների և զբոսաշրջության ոլորտի զարգացման համար: Դասընթացային փուլի ավարտին մասնակիցները բաժանվել են 6 աշխատանքային խմբերի, որոնք մշակել և ներկայացրել են մեկական ծրագիր՝ կիրառելով միջազգային շուկայավարման ռազմավարության գործիքը՝ 8 քայլերով:

Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի շրջանակներում ս.թ. դեկտեմբերի 4-6-ը Երևանում կազմակերպվել է «Թվային մարքեթինգ» թեմայով դասընթաց, որին մասնակցել են ՀՀ Արմավիրի, Լոռու և Սյունիքի մարզերի զբոսաշրջության, արտադրության և հանրային սննդի ոլորտներում գործող ՓՄՁ-ների 19 ներկայացուցիչներ: Դասընթացի ընթացքում մասնակիցները ծանոթացել են թվային մարքեթինգի ռազմավարության մշակման հիմունքներին, մարքեթինգի ռազմավարության մեջ թվային տեխնոլոգիաների կիրառմանը, թվային մարքեթինգի գործիքներին և հնարավորություններին, համացանցում բիզնեսի ծավալմանը և առաջխաղացմանը, վեբ կայքի հնարավորությունների կիրառմանը, որոնողական համակարգերի հետ աշխատանքին, թվային մարքեթինգի արդյունավետության գնահատման գործիքներին և ամբողջ գործընթացի կառավարմանը (Հավելված 2.3):

Դեկտեմբերի 12-14-ը կազմակերպվել է «Վաճառք և մարքեթինգ» թեմայով դասընթաց ՓՄՁ-ների համար, որին մասնակցել են ՀՀ Արմավիրի մարզի չրերի արտադրության, հանրային սննդի և կաթնամթերքի վերամշակման ոլորտներում գործող 18 ՓՄՁ-ների ներկայացուցիչներ (*Հավելված 2.3*): Դասընթացի ընթացքում ուսումնասիրվող հիմնական թեմաներն էին. մարքեթինգի հիմունքները և գործնական կիրառությունները, վաճառքի և ապրանքի ներկայացման հմտությունները, արդյունավետ վաճառքի կազմակերպումը, սոցիալական մարքեթինգը:

Դեկտեմբերի 18-20-ը կազմակերպվել է «Չրերի արտադրություն» թեմայով տեխնոլոգիական դասընթաց, որին մասնակցել են ՀՀ Արմավիրի մարզում չրագործության ոլորտում գործող 16 ՓՄՁ-ների ներկայացուցիչներ (*Հավելված 2.3*): Դասընթացն իրականացվել է նաև չրերի արտադրության ոլորտի ներգրավված գործնական մասնագետի կողմից: Քննարկվել են հետևյալ հիմնական թեմաները. տարբեր չրատեսակների առանձնահատկությունները, հումքի ձեռքբերման, տեղափոխման և պահեստադրման նրբությունները, տեխնիկական պահանջները, ոլորտի ստանդարտներն ու սերտիֆիկացումը, ինչպես նաև իրականացվել է փորձի փոխանակում:

ԱՄՆ ՄՁԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում ՀՀ Տավուշի և Արարատի մարզերի 23 ջերմոցային տնտեսությունների համար իրականացվել են «Բանջարեղենի մշակումը ջերմոցային տնտեսություններում և լոլիկի պատվաստումը» թեմայով տեխնոլոգիական դասընթացներ:

«Ֆերմերից՝ ֆերմերին» ("Farmer-to-Farmer") ծրագրի աջակցությամբ ՀՀ Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերի 5 գործարարների համար կազմակերպվել է սննդի վերամշակման, արտադրության անվտանգության միջազգային ստանդարտների (HACCP) վերաբերյալ հատուկ դասընթաց: Դասընթացին նախորդող օրերին ամերիկացի մասնագետը այցելել է մասնակից ձեռնարկությունների արտադրամասերը, որտեղ կատարել է ուսումնասիրություն և տեղում տրամադրել գործնական խորհրդատվություն:

Զբոսաշրջության ոլորտի 14 սկսնակ գործարարների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Կալավան գյուղում կազմակերպվել է «Հյուրատների կառավարում և հաճախորդների սպասարկում» թեմայով դասընթաց, որի ընթացքում մասնակիցները ծանոթացել են հյուրատների ներքին կանոնակարգի մշակման, հարմարությունների և սննդի կազմակերպման, մարքեթինգային գործիքների կիրառման, գովազդային գործունեության կազմակերպման, հաճախորդների կարիքների բացահայտման, հաճախորդների տարբեր խմբերի սպասարկման առանձնահատկությունների, սպասարկման կանոնների, լրացուցիչ ծառայությունների տրամադրման վերաբերյալ հարցերին:

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի 14 սկսնակ գործարարների համար կազմակերպվել է «Բուսական հումքի մթերում, սորտավորում, չորացում և փաթեթավորում» թեմայով դասընթաց, ինչպես նաև ՀՀ Արարատի մարզի և Երևան քաղաքի 13 սկսնակ գործարարների համար կազմակերպվել է ջերմատնային

տնտեսությունների հիմնադրման/կառուցման աշխատանքների վերաբերյալ դասընթաց/խորհրդատվություն (Հավելված 2.4):

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և Նիդերլանդների ավագ փորձագետների «PUM» կազմակերպության միջև ստորագրված համաձայնագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի 21 և Գեղարքունիքի մարզի 8 պանրագործների համար կազմակերպվել են «Գառուդա» և «Մոցարելա» պանիրների արտադրության վերաբերյալ մասնագիտական և գործնական դասընթացներ՝ հոլանդացի փորձառու մասնագետ Քիս վան Վուխթի գիտելիքներն ու փորձը Հայաստանում տարածելու նպատակով:

Ս.թ. օգոստոսի 7-ից 17-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում գործող 30 հյուրատնային և օթևանային գործունեությամբ զբաղվող սկսնակ և գործող գործարարների համար կազմակերպվել է մեկօրյան դասընթաց «Հյուրատնային և օթևանային բիզնեսի վարում» թեմայով՝ հյուրատնային բիզնեսի կառավարման ոլորտի փորձագետ պարոն Բրամ դե Մույնքի մասնակցությամբ: Ըստ դասընթացների մասնակիցների կողմից առաջադրված պահանջարկի, փորձագետը այցելել է գործող հյուրատները՝ անհատական խորհրդատվություն տրամադրելով բիզնեսի զարգացման և ընդլայնման վերաբերյալ (Հավելված 2.4):

Ս.թ. սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 5-ը ՀՀ Լոռու և Արմավիրի մարզերում «Փաթեթավորման զարգացում» և «Վտանգների վերլուծություն և հսկման կրիտիկական կետերը» թեմաներով կազմակերպվել են մեկօրյա դասընթացներ Հոլանդիայից հրավիրված փորձագետի՝ պրոն Լին Վերհովենի մասնակցությամբ: Դասընթացներին մասնակցությունն ապահովելու համար ՓՄՁ-ներ են ներգրավվել, որոնց մեծ մասը ձեռնարկատիրական գործունեություն են ծավալում սննդամթերքի մշակման և վերամշակման ոլորտում, մասնավորապես, չոր մրգերի/բանջարեղենի, մեղրի և մեղրից պատրաստված արտադրանքի, կաթնամթերքի, պահածոների արտադրություններում: Դասընթացների ավարտից հետո փորձագետը այցելել է մասնակիցների արտադրամասերը և խորհրդատվություն տրամադրել տեղում:

Փորձագետի այցի ավարտին, 2017թ.հոկտեմբերի 4-ին Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կենտրոնական գրասենյակում տեղի ունեցավ կազմակերպված միջոցառումների արդյունքների և կատարված աշխատանքների եզրափակիչ ներկայացում/քննարկումը:

Ընդհանուր առմամբ, վերոհիշյալ միջոցառմանը ներգրավվել են ՀՀ մարզերում գործող 25 տեղական ՓՄՁ-ներ (Հավելված 2.4): Այց է կատարվել 20 ՓՄՁ-ների մոտ:

Ս.թ. նոյեմբերի 21-25-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից հյուրընկալվել է սպանդանոցային բիզնեսի կառավարման մասնագետ, պարոն Քիս վան Էյնջովենը: Այցի շրջանակներում փորձագետի մասնակցությամբ հանդիպում է կազմակերպվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության» ներկայացուցիչների հետ սպանդանոցային բիզնեսի կառավարման խնդիրների և ակտուալ հարցերի քննարկման համար: Մասնագետը նաև իր գիտելիքներն ու փորձն է ներկայացրել մեկօրյա դասընթացի ընթացքում Հայաստանում սպանդանոցային գործունեություն ծավալող սկսնակ և գործող գործարարների համար: Համաձայն մշակված ժամանակացույցի՝ կազմակերպվել է այց ՀՀ Արագածոտնի (ք. Թալին) և Կոտայքի (ք. Արամուս), մարզեր որտեղ տեղում

համապատասխան խորհրդատվություն է տրամադրվել սպանդանոցների կողմից ծավալվող գործունեության բարելավման վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, «Սպանդանոցային բիզնեսի կառավարում» դասընթացին մասնակցել են 12 ՓՄՁ-ներ (*Հավելված 2.4*): Այց է կատարվել 2 գործող սպանդանոց:

Այլ ուսուցողական աջակցություն

Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 15-16-ը կազմակերպվել է «Կարիերայի զարգացում» թեմայով դասընթաց տեղական աշխատուժի համար, որին մասնակցել են Արմավիր մարզի տարբեր համալսարանների 23 ուսանողներ: Դասընթացի նպատակն էր տեղական աշխատուժի ներկայացուցիչներին ապահովել գործնական գիտելիքներով և հմտություններով, ինչը հնարավորություն կտա նրանց աշխատանք գտնել իրենց նախընտրած ոլորտներում և ընկերություններում: Դասընթացի ընթացքում քննարկված և ներկայացված հիմնական թեմաներն էին. սեփական կարողությունների գնահատում, մոտիվացիա, ներկայացման հմտություններ և արդյունավետ բանակցությունների վարում, արդյունավետ ինքնաներկայացում և ինքնակենսագրականի պատրաստում, աշխատանքային հարցազրույցին արդյունավետ նախապատրաստում:

Դեկտեմբերի 21-22-ը «Չրերի արտադրություն» թեմայով տեխնոլոգիական դասընթաց է կազմակերպվել տեղական աշխատուժի այն ներկայացուցիչների համար, ովքեր նպատակ ունեն բարելավել իրենց գիտելիքները նշված ոլորտում և աշխատանքի անցնել չրագործության հետ առնչվող ընկերություններում: Դասընթացին մասնակցել է տեղական աշխատուժի 19 ներկայացուցիչներ:

Աջակցություն սիրիահայ գործարարներին

Ս.թ. փետրվար ամսին կատարվել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի (UNHCR) ֆինանսավորմամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում իրականացված ուսուցման դասընթացների արդյունքում ֆինանսական աջակցություն ստացած 28 խնդրահարույց սիրիահայ սկսնակ գործարարների կարիքների գնահատում:

Հաշվետու ժամանակահատվածում ս.թ. մայիսի 17-ին կազմակերպվել է սեմինար-խորհրդատվություն, որին մասնակցել են արտադրության և ծառայության ոլորտներում գործող 17 սիրիահայ գործարարներ: Դասընթացը ներառել է հետևյալ հիմնական թեմաները՝ 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող ՀՀ Հարկային օրենսգրքի՝ փոքր և միջին ձեռնարկություններին վերաբերող դրույթները, մասնավորապես, օրենսգրքի հատուկ հարկային ռեժիմները՝ շրջանառության հարկի համակարգը, ընտանեկան ձեռնարկատիրության համակարգը, արտոնագրային հարկը: Ներկայացվեցին վարչարարության և փաստաթղթաշրջանառության բնագավառի նորամուծությունները, այդ թվում՝ ՀԴՄ-ների շահագործման և ծախսերի հիմնավորվածության հարցերը, ինչպես նաև ԵԱՏՄ նոր մաքսային օրենսգրքին վերաբերող մի շարք հարցեր: Գործարարներին տրամադրվեց իրավաբանական և

գործարար խորհրդատվություն՝ բիզնեսի կազմակերպման, ապրանքների և ծախսերի հաշվառման, ներմուծման և արտադրության կազմակերպման ուղղություններով (Հավելված 2.3):

Հայկական Կարմիր Խաչի ընկերության «Աջակցել առավել կարիքավորներին» ծրագրի հետ համատեղ ս.թ. մայիսի 19-ին կազմակերպվել է հանդիպում սիրիահայ սկսնակ գործարար կանանց և խմորեղենի արտադրության, զբոսաշրջության և խորհրդատվության ոլորտներում հաջողությամբ գործող հայաստանաբնակ գործարար կանանց միջև, որի ընթացքում տեղի է ունեցել փորձի փոխանակում և գործարար կապերի հաստատում:

Ս.թ. հոկտեմբերի 13-15 կազմակերպված “Arm Prod EXPO” միջազգային ցուցահանդեսին մասնակցել են 5 սիրիահայ գործարարներ:

Ընդհանուր առմամբ ուսուցողական աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել 710 սկսնակ գործարարներ և ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ, որոնցից 464-ը «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում:

«Պեպական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պեպական բյուջեից գումար չի հարկացվել:

3. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերի շրջանակներում իրավասօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների հաշվետվությունների ներկայացման և այլ ուղղություններով շուրջ 4,600 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 10,337 անգամ աջակցություն (այդ թվում՝ Հաշվապահական կենտրոնում գործող կազմակերպությունների մասնագետների կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տեղեկատվական և խորհրդատվական բնույթի աջակցություն է տրամադրվել 52 անգամ):

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կենտրոնական և մարզային գրասենյակները շարունակել են ծառայել ՓՄՁ սուբյեկտների համար որպես *Աջակցության Կենտրոններ*, որոնց միջոցով ՓՄՁ-ի սուբյեկտները հնարավորություն ունեն Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի մասնագետների օգնությամբ պատրաստել և ՀՀ հարկային մարմիններ ներկայացնել իրենց էլեկտրոնային հաշվետվությունները, հաշվարկները և այլ հաշվարկային

փաստաթղթերը: Հաշվետու ժամանակահատվածում այս ուղղությամբ 292 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է շուրջ 900 աջակցություն:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը Համաշխարհային բանկի խումբ հանդիսացող Միջազգային ֆինանսական կորպորացիայի հետ համատեղ ս.թ. մայիս-հունիս և նոյեմբեր ամիսների ընթացքում իրականացրել են իրազեկում-խորհրդատվություն ՀՀ հարկային նոր օրենսգրքի և տեսչական ստուգումների վերաբերյալ ՀՀ բոլոր մարզերում գործող ՓՄՁ սուբյեկտների համար: Հանդիպումների ընթացքում գործարարներին ներկայացվել են ՀՀ հարկային օրենսգրքի ՓՄՁ սուբյեկտներին հետաքրքրող հատվածները, մասնավորապես հարկման հատուկ համակարգերին վերաբերող դրույթները (ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտների հարկման առանձնահատկությունները, արտոնագրային և շրջանառության հարկի համակարգերը, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտներին առնչվող հարկային այլ օրենքներում նախատեսվող փոփոխությունները): Հանդիպման ընթացքում ներկայացվել են նաև գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ և մշակմամբ զբաղվող սուբյեկտների հարկման և հարկային հաշվառման առանձնահատկությունները, ինչպես նաև տեսչական ստուգումների մանրամասները, մասնավորապես ռիսկի վրա հիմնված ստուգումներ, տնտեսավարողների իրավունքներն ու պարտականությունները: Հանդիպման վերջին մասը իրականացվել է հարց ու պատասխանի ձևաչափով, որի ընթացքում գործարարները ստացել են իրենց հարցերի պատասխանները:

Վերը նշված փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկելու նպատակով ՀՀ 10 մարզերում իրականացվել են 13 սեմինար-խորհրդատվություններ, որոնց ներկա են եղել 434 ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ (*Հավելված 3*): Սեմինարների ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է ՀՀ հարկային օրենսգրքի Հատուկ հարկման համակարգերի վերաբերյալ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից մշակված տեղեկատվական նյութ:

Բացի այդ, ՀՀ Գեղարքունիքի մարզի 25 ՓՄՁ սուբյեկտի համար կազմակերպվել է ուսուցողական - տեղեկատվական միջոցառում, որի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին ներկայացվել է ՀՀ հաշվետվությունների ներկայացման նոր համակարգը և Օգտվողների կառավարման նոր համակարգում գրանցվելու կարգը (*Հավելված 3*):

Սեմինարների ընթացքում հրավիրվել են տեղական լրատվական միջոցներ, որոնք լուսաբանել և տեղեկատվություն են տարածել նշված միջոցառումների բովանդակության վերաբերյալ:

Ս.թ. ապրիլի 18-ին և 26-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը «Հայաստանի վաճառականներ» ՀԿ-ի և «Հարկ վճարողի փաստաբանի գրասենյակի» հետ համատեղ անցկացրել են երկու կլոր-սեղան քննարկումներ, որտեղ խոսվել են փոքր բիզնեսին հուզող ներկա խնդիրների մասին, մասնավորապես քննարկվել է գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ և մշակմամբ զբաղվող սուբյեկտների հարկման և հարկային հաշվառման խնդիրները, փոքր սուբյեկտների կողմից գյուղմթերքի արտահանման ժամանակ առաջացող տեխնիկական և վարչարարական բնույթի հարցերը, ինչպես նաև հարկային օրենսգրքի փոքր բիզնեսին վերաբերող հատվածը, հատկապես ընտանեկան ձեռնարկատիրության համակարգում նախատեսվող փոփոխությունները: Քննարկվել են նաև եկամտային հարկի մասին օրենքում

կատարված փոփոխությունները, ինչպես նաև վարձու աշխատողների գրանցման հետ կապված նոր մոտեցումները:

Ա.թ. նոյեմբեր ամսին ՀՀ Լոռու մարզի Վանաձոր և Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքներում Բիզնեսի աջակցման գրասենյակի և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներկայացուցիչների հետ համատեղ կազմակերպվել է նաև 2 կյոր սեղան քննարկումներ ՓՄՁ սուբյեկտների հետ: Քննարկումները վերաբերել են նոր հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունների հետևանքով ՓՄՁ սուբյեկտների մոտ հնարավոր բարդությունների և խոչընդոտների բացահայտմանը: Քննարկվել են նաև հարկային օրենսդրությունում նախատեսվող նոր փոփոխությունները, տրվել են հարցերի պատասխաններ, հավաքագրվել են առկա խնդիրները և առաջարկությունները: Քննարկման արդյունքները ամփոփվել են Գործարարության աջակցման գրասենյակի հետ համատեղ, ինչը կներկայացնի ՀՀ վարչապետին կից ՓՄՁ խորհրդի առաջիկա նիստի ընթացքում:

Հաշվետու ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցների հետ ակտիվ աշխատանք է տարվել կենտրոնի գործունեությունը լուսաբանելու նպատակով: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, բացի ընթացիկ նորություններից, իր կայքում պարբերաբար տեղադրում է իր շահառուների հաջողության պատմությունները:

Շարունակվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության մասին պատմող հեռուստածրագրի հեռարձակումը Հայկական երկրորդ հեռուստաալիքով: Թողարկվել և հեռարձակվել է 10 հեռուստածրագիր: Թողարկումներից յուրաքանչյուրն առանձին-առանձին նվիրված են եղել ՀՀ մարզերում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված ծրագրերի լուսաբանմանը, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի շահառուների հաջողության պատմություններին, ընթացիկ միջոցառումներին և սպասվող որոշ իրադարձություններին: Բոլոր հեռարձակված հաղորդումները ներբեռնված են Յություբ կայքում գործող Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ալիքում:

Բացի հեռուստահաղորդումներից, ԶԼՄ-ներով բազմիցս ներկայացվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցիչների հարցազրույցները ՓՄՁ ոլորտի խնդիրների և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության վերաբերյալ:

«Արմենպրես» գործակալության հետ արդյունավետ գործընկերության հիման վրա Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հանրային կապերի բաժինը գործակալությանն է տրամադրում իրադարձությունների մասին պատմող տեղեկություն:

Համապատասխան պայմանավորվածության շրջանակում շարունակվում է գործակցությունը հայկական կայքերի լավագույն տասնյակում գտնվող tert.am և news.am կայքերի հետ: Այդ կայքերում նույնպես պարբերաբար լուսաբանվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեությունը: Յուրաքանչյուր միջոցառումից հետո Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կայքին զուգահեռ՝ հոդվածները հայտնվում են նաև Արմենպրես, Պանորամա, Ի-մեդիա և այլ կայքերում: Արմնյուզ և Արմենիա, Հանրային հեռուստաընկերությունները ռեպորտաժներ են հեռարձակել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ծրագրերի շրջանակում իրականացվող միջոցառումների մասին:

Շարունակում է ակտիվորեն գործել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ֆեյսբուքյան էջը: Այն օգնում է երկխոսություն ծավալել շահառուների և կենտրոնի միջև: Էջում պարբերաբար տարածվում են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի նորությունները, ՓՄՁ ոլորտին առնչվող լուրեր

այլ կայքերից, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության՝ ՓՄՁ ոլորտին առնչվող նորությունները, կառավարության, ԱԺ, միջազգային գործընկեր կազմակերպությունների նորությունները, որոնք վերաբերում են ՓՄՁ ոլորտին:

Ֆեյսբուքին զուգահեռ և կենտրոնի ֆեյսբուքյան էջի հետ համընթաց (սինխրոնացված) գործում է նաև կենտրոնի էջը twitter, linked in սոցիալական ցանցերում: Յուրաքանչյուր սոցիալական ցանցում կենտրոնը 2012թ.-ից սկսած՝ տեղադրում և ներբեռնում է իր գործունեության հետ կապ ունեցող տեսանյութերը, հեռուստատեսային ծրագրերը, շահառուների հաջողության պատմությունները:

«Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

4. ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

4.1 ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական աջակցություն (Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամի կողմից երաշխավորությունների տրամադրում)

2017 թվականի ընթացքում «Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամի կողմից երաշխավորությունների տրամադրում» ծրագրի շրջանակներում գործող 13 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 192,7 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն՝ ապահովվելով 411,6 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Երաշխավորություն ստացած ՓՄՁ սուբյեկտները գործունեություն են ծավալում ՀՀ Վայոց Ձորի, Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի և Լոռու մարզերում, ինչպես նաև Երևան քաղաքում:

Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 31,7 մլն ՀՀ դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 14,8 մլն ՀՀ դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 12%: Վարկային պարտավորությունների երաշխիքով միջին ապահովվածությունը կազմել է 52,2%: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի, «Ինտերբանկ» ՓԲԸ-ի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջոցով (Հավելված 4.1):

4.2 Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում)

2017 թվականի ընթացքում «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն են ստացել 66

սկսնակ գործարարներ: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 280.5 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 288.5 մլն ՀՀ դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջոցով (Հավելված 4.2):

Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 4.4 մլն ՀՀ դրամ, ստացված վարկային միջոցների միջին գումարը՝ 4.2 մլն ՀՀ դրամ:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներն ըստ մարզերի

Մարզ	Քանակ	Վարկի գումար	Երաշխավորություն
Երևան	4	18,490,000	18,958,462
Գեղարքունիք	7	24,340,400	25,054,089
Կոտայք	4	19,928,000	20,495,964
Վայոց Ձոր	14	56,875,050	58,501,186
Արագածոտն	6	23,192,500	23,876,035
Լոռի	4	15,592,000	16,036,384
Շիրակ	7	35,765,000	36,784,330
Տավուշ	9	37,695,000	38,769,337
Արարատ	3	10,988,375	11,301,553
Արմավիր	2	9,650,000	9,925,032
Սյունիք	6	27,995,600	28,800,751
Ընդամենը	66	280,511,925	288,503,123

4.3 Գործարար նախաձեռնություններին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում)

2017 թվականի ընթացքում «Գործարար նախաձեռնությունների աջակցություն» ծրագրի շրջանակներում 2 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 19.8 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն՝ ապահովելով 17.8 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Երաշխավորություն ստացած ՓՄՁ սուբյեկտները գործունեություն են ծավալում ՀՀ Արագածոտնի մարզում և Երևան քաղաքում:

Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 8,9 մլն ՀՀ դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 9.9 մլն ՀՀ դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 11.5%: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի միջոցով (Հավելված 4.3):

Ընդհանուր առմամբ, ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել 81 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ:

«Պեպական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրով «ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն» ծրագրի իրականացմանը ՀՀ պեպական բյուջեից գումար չի հատկացվել:

5. Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն

Հաշվետու ժամանակահատվածում, ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են հետևյալ ենթակառուցվածքային ծրագրերի շինարարական աշխատանքները.

- «ՀՀ Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղական համայնքի ոռոգման համակարգի մասնակի վերակառուցման» ծրագիրը.
- «ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատ գյուղական համայնքի ոռոգման համակարգի վերակառուցման» ծրագիրը.
- «ՀՀ Վայոց Ձորի մարզի Վերնաշեն գյուղական համայնքի ոռոգման համակարգի մասնակի վերակառուցման» ծրագիրը.
- «ՀՀ Շիրակի մարզի Մեղրաշեն գյուղական համայնքի արոտավայրի ջրարբիացման համակարգի կառուցման» ծրագիրը:
- «ՀՀ Տավուշի մարզի Վերին Կարմիրաղբյուր գյուղական համայնքի անասնակերի պատրաստման և հացահատիկի զտման կայանի վերակառուցման» ծրագիրը:
- ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի համար ձեռք է բերվել հացահատիկահավաք կոմբայն:
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ համայնքի համար ձեռք է բերվել կարտոֆիլի և ցորենի շարքացան:
- «ՀՀ Շիրակի մարզի Փանիկ գյուղական համայնքի արոտավայրի ջրարբիացման համակարգի կառուցման» ծրագիրը:
- «Հայկական Կաթ» գյուղատնտեսական կոոպերատիվում բարձրաժեք պանրի արտադրության խթանում և արտադրողականության բարձրացում:
- «Մանթաշի Միլենա» գյուղատնտեսական կոոպերատիվում բարձրաժեք պանրի արտադրության խթանում և արտադրողականության բարձրացում:
- «Ռոզա 1» գյուղատնտեսական կոոպերատիվում բարձրաժեք պանրի արտադրության խթանում և արտադրողականության բարձրացում:

- ՀՀ Տավուշի մարզի Չինարի համայնքում հողագործության արդյունավետության բարձրացման նպատակով տրամադրվել է կարտոֆիլաքանդիչ, սոխի և արևածաղկի սերմնացան:

Հաշվետու ժամանակահատվածում, ծրագրի շահառուների գործարար և տեխնոլոգիական կարողությունների զարգացման նպատակով 98 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների համար կազմակերպվել են նաև ոլորտային ուղղվածություն ունեցող դասընթացներ (*մանրամասները ներկայացված են 2.2 բաժնում, Հավելված 2.4*):

Նպատակ ունենալով բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների մրցունակությունն ու կենսունակությունը՝ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է դրամաշնորհների տրամադրում՝ նյութեր և/կամ սարքավորումները ձեռք բերելու և շահառուին տրամադրելու միջոցով: Դրամաշնորհները տրամադրվում են համաձայն հաստատված ընթացակարգի: Դրամաշնորհի կարող են հավակնել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրին մասնակցած, ոլորտային աջակցության ծրագրերի կողմից խրախուսվող ոլորտներից որևէ մեկին համապատասխան առավել իրատեսական գործարար ծրագրեր մշակած և ներկայացրած, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված անհատ ձեռնարկատերերն ու իրավաբանական անձինք: Հաշվետու ժամանակահատվածում սարքավորումների/նյութերի ձևով դրամաշնորհ է տրամադրվել ՀՀ Արմավիրի, Սյունիքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում գործող 11 ՓՄՁ սուբյեկտի (*Հավելված 5*):

Մշակվել և հրատարակվել է «Սննդամթերքի մակնշման ուղեցույցը», ինչպես նաև «Սառնարանային տնտեսությունների կառուցման և շահագործման» և «Պատշաճ արտադրական պրակտիկայի և պատշաճ հիգիենայի պրակտիկայի կիրառման ձեռնարկ չորացված միրգ ու բանջարեղեն արտադրողների համար» օրինակելի մոդելները:

Կազմակերպվել է փոքր աշխատաժողով Տավուշի մարզի Ենոքավան համայնքում՝ տուրիզմի և հյուրատնային գործունեության զարգացման թեմաներով: Նույն համայնքում Ենոքավանի զարգացման հիմնադրամի հետ համատեղ հիմնվել է «Ենոքավանի զբոսաշրջության զարգացման տեղեկատվական կենտրոն»-ը, որի համար ծրագրի շրջանակում վերանորոգվել է կենտրոնի շենքը և կառուցապատվել շրջակա տարածքը: «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետ մշակվել է նաև Ենոքավանի զարգացման ռազմավարությունը:

Տեղական տնտեսական զարգացմանը միտված փոքր աշխատաժողովներ են իրականացվել նաև Գեղարքունիքի մարզի Կալավան և Կարմիրգյուղ համայնքներում, Տավուշի մարզի Բերդ, Չինարի, Արագածոտնի մարզի Արագած, Օշական, Աշտարակ համայնքներում:

Տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համատեղ մի շարք մասնակցային աշխատաժողովներ և քննարկումներ են իրականացվել Շիրակի և Արագածոտնի մարզերում, որոնց արդյունքում բացահայտվել և վեր են հանվել տնտեսական զարգացման ենթակառուցվածքային նախաձեռնություններ, որոնք, որպես ծրագիր առաջարկի հայտ, խոշորացված համայնքների և համայնքային փնջերի կողմից

մշակվել և ներկայացվել են ֆինանսավորման՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին:

Ընդհանուր առմամբ իրականացվել է 12 ենթակառուցվածքային ծրագիր, 98 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների համար կազմակերպվել են նաև տեխնոլոգիական դասընթացներ, դրամաշնորհ են ստացել 11 ձեռնարկատերեր: Մշակվել և տպագրվել են 1 գործարար ուղեցույց, ինչպես նաև 2 օրինակելի գործարար մոդել:

«Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրով «Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հարկացվել:

6. Կանանց ձեռներեցությանն աջակցություն

ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախաձեռնողության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումներն ըստ արժանավույն գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով «Պետական աջակցություն ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրի «Կանանց ձեռներեցությանն աջակցություն» միջոցառման շրջանակներում իրականացվել է ՀՀ վարչապետի «Լավագույն կին գործարար» 2017 թվականի մրցանակաբաշխությունը: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ս.թ. մարտ ամսվա ընթացքում իրականացրել է մրցանակաբաշխության վերաբերյալ հայտարարության տարածման, հայտերի հավաքագրման և ամփոփման, ներկայացված տեղեկատվության ճշգրտման, վերամշակման, վերլուծության, սահմանված չափորոշիչներին համաձայն հայտատուների նախնական ընտրության, միջազգային կառույցների ներգրավման, ինչպես նաև կազմակերպչական բոլոր աշխատանքները: ՀՀ վարչապետի «Լավագույն կին գործարար» 2017 թվականի մրցանակաբաշխությունը ներկայացվել է հետևյալ 6 անվանակարգերով. «Լավագույն կին գործատու», «Լավագույն կին նորարար», «Կին գործարարի լավագույն ապրանքանիշ», «Լավագույն երիտասարդ կին գործարար», «Լավագույն սկսնակ կին գործարար» և «Լավագույն արտահանող կին գործարար»: Մրցանակաբաշխությանը ներկայացվել է մասնակցության 141 հայտ, որոնցից 43-ը՝ Երևանից և 98-ը՝ ՀՀ մարզերից: Մրցույթն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, ինչպես նաև ելնելով մրցանակաբաշխության անցկացման կարգի համապատասխան դրույթներից՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից հավաքագրվել են բոլոր հայտերը և ներկայացվել են մրցութային հանձնաժողովի անդամների ընտրությանը: Մրցանակաբաշխության արդյունքները ամփոփվել են ս.թ. մարտի 13-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության նիստերի դահլիճում կազմակերպված մրցութային հանձնաժողովի նիստի ընթացքում:

Մարտի 16-ին «Արմենիա Մարիոթ Երևան» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում կայացած մրցանակների շնորհման հանդիսավոր միջոցառման ընթացքում մասնակիցներին ողջունեց և մրցանակաբաշխության 12 հաղթողներին (6-ը՝ Երևանից և 6-ը՝ ՀՀ մարզերից) մրցանակներ հանձնեց ՀՀ վարչապետ Կ. Կարապետյանը: 2016թ. մեկնարկած և արդեն ավանդական դարձած նախաձեռնության արդյունքում Արցախի 2 լավագույն կին գործարարներին խրախուսական մրցանակներ և նվերներ հանձնեց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրեն Լ. Մնացականյանը:

Խրախուսական պատվոգրեր, նվերներ և մրցանակներ 33 կին գործարարներին հանձնեցին նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր միջազգային մի շարք կազմակերպություններ՝ ԱՄՆ ՄԶԾ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիրը (USAID PRP), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ), ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (UNIDO) և նրա կողմից իրականացվող տեքստիլի ոլորտի արդիականացման և UNIDO/UNDP գյուղի զարգացման ENPARD ծրագրերը, Բնակչության հիմնադրամի ծրագիրը (UNFPA) և Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը (UNHCR), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի «Գործարար կանայք» ծրագիրը (EBRD ASB) և Գործարարության աջակցության գրասենյակը (EBRD BSO), ՀՀԿ կանանց խորհրուրդը, Հայաստանի ամերիկյան համալսարանը (AUA), «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը (CARITAS), ինչպես նաև «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (AYWA):

Մրցանակաբաշխության շրջանակներում Ասիական զարգացման բանկի հետ համատեղ կազմակերպվեց երկօրյա ցուցահանդես-տոնավաճառ, որին մասնակցեցին ավելի քան 80 կին գործարարներ:

Ա.թ. մարտի 16-ին «Լավագույն կին գործարար 2017» մրցանակաբաշխության ավարտին տեղի է ունեցել կին գործարարների խնդիրներին և դրանց լուծման ուղիներին նվիրված կլոր սեղան-քննարկում, որին մասնակցել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և միջազգային մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ և կին գործարարներ՝ թվով 17 մասնակից: Քննարկման ընթացքում մասնակիցները ներկայացրել են առկա խնդիրները և խոչընդոտները, որոնց նրանք բախվում են գործունեության ընթացքում, ինչպես նաև առաջարկություններ են արվել այդ խնդիրների լուծման, այդ թվում՝ աջակցության նոր գործիքների և մեխանիզմների ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես ընդգծվեց կանանց ձեռներեցությանն ուղղված ծրագրերի անհրաժեշտությունը, կարևորելով խմբային քննարկումները, քանի որ գաղափարների և մտքերի փոխանակումը տանում է դեպի խնդիրների լուծում և ակտիվացնում սոցիալական կապը: Առաջարկություններ արվեցին ավելացնել իրավական, հարկային և մաքսային ուղղություններով տեղեկատվական և խորհրդատվական աջակցությունը, առաջնվման և ֆինանսական ծրագրերը, աջակցել սկսնակ կին ձեռներեցներին և հնարավորություն տալ զարգանալ՝ տրամադրելով վարկեր, ենթադրամաշնորհներ, սարքավորումներ, ուղղորդում, վերապատրաստում: Հարկերը, սկսնակ շահառուների համար բարդ թղթաբանությունը, բարձր տոկոսադրույքները հիմնական խնդիրներն են

գրեթե բոլոր բիզնեսների համար՝ անկախ բիզնես ոլորտից, գտնվելու վայրից կամ չափից: Նշվեց որ կանայք նույնպես նույն կարիքներն ունեն բիզնես սկսելու համար, սակայն նրանց համար անհրաժեշտ է նաև ուժեղացնել կանանց կապեր հաստատելու հնարավորությունները և հմտությունները:

Կրթական, տնտեսական և սոցիալական ոլորտներում կանանց ներգրավվածությունը և հնարավորությունները ընդլայնելու նպատակով 2017 թվականի ապրիլի 21-22-ը, Հայաստանի Ամերիկյան համալսարանը կազմակերպել էր «Հայաստանում աղջիկների և կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնում» խորագրով գիտաժողով, որի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը իրականացրել է պանել քննարկում նվիրված կանանց մասնակցությանը Հայաստանի տնտեսական զարգացման գործում: Նիստի բանախոսներն էին ՀՀ վարչապետի 2017 թվականի «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության 4 մրցանակակիր կանայք, որոնք կիսվեցին իրենց ձեռնարկատիրական փորձով և խոսեցին ոլորտում առկա խնդիրների և մարտահրավերների մասին:

Ա.թ. հոկտեմբերի 13-15 կազմակերպված “Arm Prod EXPO” միջազգային ցուցահանդեսին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցությամբ մասնակցել են ՀՀ վարչապետի տարբեր տարիների «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության մրցանակների արժանացած 6 կին գործարարներ:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» «Պեպրական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրով «Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի իրականացմանը ՀՀ պեպրական բյուջեից գումար չի հատկացվել:

7. Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում

Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցությունը և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովումն իրականացվում է հիմնականում Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության շրջանակներում, ինչպես նաև ՓՄՁ միջազգայնացմանն ուղղված այլ միջոցառումների շրջանակներում:

ա) ՓՄՁ միջազգայնացմանն աջակցություն Ձեռնարկությունների Եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցը (ՁԵՑ) Եվրոպական նախաձեռնություն է, որի նպատակն է գործարարությանն ու նորարարությանն ուղղված աջակցություն տրամադրել ձեռնարկություններին Եվրոպայում և Եվրոպայից դուրս: ՁԵՑ-ի ընդհանուր համակարգումն իրականացվում է Եվրոպական Հանձնաժողովի ՓՄՁ հարցերով գործադիր գործակալության (EASME) կողմից:

ՁԵՑ-ի գործունեությունը Հայաստանում իրականացվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի (համակարգող) և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (գործընկեր) կողմից: Հայկական կոնսորցիումը նշված EASME գործակալության հետ ստորագրել է շրջանակային համաձայնագիր 2015-2020թթ. համար: Սկսած 2016թ. ՁԵՑ-ի աշխատանքները Հայաստանում համաֆինանսավորվում են Եվրոպական Հանձնաժողովի կողմից՝ COSME ծրագրին Հայաստանի անդամակցության շնորհիվ: Մրցույթին մասնակցության արդյունքում, 2017-2018 թվականների համար, կնքվել են ՁԵՑ Հայաստան և Հորիզոն 2020 ծրագրերի համաձայնագրերը:

Հաշվետու ժամանակահատվածի ամփոփ տվյալներ.

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի գործունեության շրջանակներում 2017 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, բիզնեսի միջազգայնացմանն ուղղված 540 տարաբնույթ ծառայություններ են մատուցվել 348 ՓՄՁ սուբյեկտների, այդ թվում՝ 26 ՓՄՁ սուբյեկտների գործարար նկարագրեր տեղադրվել են ՁԵՑ-ում (*Հավելված 6.1*), 9 ՓՄՁ սուբյեկտներ կնքել են համագործակցության համաձայնագիր, 1 ՓՄՁ սուբյեկտ կնքել է համագործակցություն՝ խորհրդատվական ծառայությունների մատուցման արդյունքում, 172-ը՝ կազմակերպված բիզնեսի միջազգայնացմանը վերաբերող հանդիպումների մասնակիցներն են (*Հավելված 6.2*), 140 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել են տարբեր տեսակի աջակցություններ, այդ թվում՝ տեղադրվել են հարցումներ ՁԵՑ-ում, ուղարկվել են հետաքրքրության առաջարկներ և ստացված կոնտակտները ներկայացվել են տեղական ընկերություններին, ստացվել են հետաքրքրության առաջարկներ և ներկայացվել են նշված ընկերությունների տվյալները, մասնակցել են ՁԵՑ շրջանակներում կազմակերպված գործարար հանդիպումներին, ստացել են նորարարության կառավարմանն ուղղված խորհրդատվություն, ինչպես նաև ստացել են անհատական խորհրդատվություն:

Կնքված համագործակցության համաձայնագրեր.

Հաշվետու ժամանակահատվածում կնքվել են 9 համագործակցության համաձայնագրեր: Կնքված համաձայնագրերը հակիրճ ներկայացված են ստորև.

- հայկական արտադրության կոշիկի արտահանում Ֆրանսիա,
- արձայնա զարդերի արտահանում Ռուսաստան,
- սերմերից ու կորիզներից ստացված ձեթի արտահանում Ռուսաստան,
- Խոզի կերի ներմուծում Ռուսաստանից,
- ինքնասունձվող ժապավենների ներմուծում Ռուսաստանից,
- լոգասենյակի աքսեսուարների ներմուծում Իսպանիայից,
- արձայնա զարդերի արտահանում Բելգիա,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համագործակցություն Մեծ Բրիտանական ընկերության հետ,
- հրուշակեղենի ներմուծում Ռուսաստանից:

Հաշվետու ժամանակահատվածում կնքվել է նաև մեկ համագործակցություն՝ խորհրդատվական ծառայությունների մատուցման արդյունքում: Համագործակցությունը վերաբերում է տրակտորների վերանորոգված շարժիչները Հայաստանից Գերմանիա արտահանմանը:

Գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ.

Ա.թ. հունվարի 25-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հանդես է եկել որպես OSCE chairmanship Business conference 2017 միջոցառման համակազմակերպիչ: Միջոցառումը կազմակերպվել է Ավստրիայի ՁԵՑ գործընկեր՝ Ավստրիայի ֆեդերալ տնտեսական պալատի կողմից: Միջոցառման շրջանակներում կազմակերպված գործարար հանդիպումներին մասնակցել են 4 հայկական ընկերություններ:

Ա.թ. մարտի 9-11-ը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՁԵՑ-ի շրջանակներում, համագործակցելով Երևանում բրիտանական դեսպանատան, «Բի էս Սի» կազմակերպության և Ինֆորմացիոն Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միության հետ, հանդես է եկել որպես «Հայ-բրիտանական ՏՏ նախաձեռնություններ» միջոցառման կազմակերպիչ: Միջոցառումը տեղի է ունեցել Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք Լոնդոնում: Միջոցառման շրջանակներում Լոնդոնում ՁԵՑ գործընկեր Newable Limited կազմակերպության հետ համատեղ ջանքերով կազմակերպվել են գործարար հանդիպումներ: Գործարար հանդիպումներին մասնակցել են 20 հայկական ընկերություններ, որոնք ընդհանուր առմամբ ունեցել են 90 գործարար հանդիպումներ անգլիական ընկերությունների հետ:

Ա.թ. մարտի 20-24-ը 18 հայկական ընկերություններ մասնակցել են Գերմանիայի Հաննովեր քաղաքում կազմակերպված Future Match at CeBIT 2017 - ICT Brokerage Event գործարար համագործակցության հաստատման միջոցառումներին: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հանդես է եկել որպես միջոցառման համակազմակերպիչ:

Ա.թ. սեպտեմբերի 3-10-ը Գերմանիայի Բեռլին քաղաքում ՁԵՑ Հայաստանի կողմից կազմակերպվել են գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ՝ Բեռլինում հայկական սկսնակների ակադեմիայի շրջանակներում: Միջոցառմանը մասնակցել են 15 սկսնակ նորարարական ընկերություններ, որոնք ունեցել են անհատական հանդիպումներ՝ պոտենցիալ գործընկերների հետ:

Ա.թ. ապրիլի 13-ին Ռուսաստանի Դաշնության նորարարությունների կենտրոնի կողմից, որը հանդիսանում է ՁԵՑ կառույց, կազմակերպվել են գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ՝ Ռուսաստանի Դաշնության Ուլյանովսկ քաղաքում: Միջոցառումը կազմակերպվել էր «Պատրաստված է Ուլյանովսկի տարածաշրջանում» ցուցահանդեսի շրջանակներում: Նշված միջոցառումներին ՁԵՑ Հայաստան ծրագրի շրջանակներում մասնակցել են 3 հայկական ընկերություններ:

Ա.թ. նոյեմբերի 28-30-ը հայկական 1 ընկերություն այցելել է Ֆրանսիայի Կանն քաղաք՝ մասնակցելու գործարար համագործակցության հաստատման միջոցառումներին՝ Trustech 2017 միջոցառման շրջանակներում: ՁԵՑ Հայաստանը հանդես է եկել որպես միջոցառման համակազմակերպիչ:

Ա.թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը ՁԵՑ Հայաստանը համակազմակերպիչ է հանդիսացել նաև Ռուսաստանի Դաշնության Դոնի Ռոստով քաղաքում կայացած «Արտասահմանյան տնտեսական կապերը՝ որպես Ռուսաստանի դաշնային շրջանների փոքր և միջին ձեռնարկությունների արդյունավետ զարգացման» 5-րդ միջազգային կոնֆերանսի:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ՁԵՑ Հայաստան ծրագրի շրջանակներում կազմակերպվել/համակազմակերպվել են 14 գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ, որոնց մասնակցել են 61 ՓՄՁ-ների 64 ներկայացուցիչներ:

Միջազգայնացմանն ուղղված միջոցառումներ.

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են նաև ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացմանն ու մրցունակության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես.

- 2017թ.-ի փետրվարի 20-ին Երևանում, East Invest 2 և EU4business ծրագրերի նախաձեռնությամբ կազմակերպվել է տեղեկատվական միջոցառում, որի ընթացքում ներկայացվել են ոչ միայն ՁԵՑ գործիքները, այլև Հորիզոն 2020 և ՓՄՁ գործիք ծրագրերը: Նշված միջոցառմանն ապահովվել է 63 ՓՄՁ սուբյեկտների և գործարար աջակցություն տրամադրող կառույցների ներկայացուցիչների մասնակցությունը:
- 2017թ. հունիսի 6-ին ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում կազմակերպվել է տեղեկատվական միջոցառում: Միջոցառման ընթացքում, ի լրումն ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ներկայացված ՁԵՑ գործիքի, տարբեր շահառու կազմակերպությունների կողմից ներկայացվել են միջազգայնացմանն ուղղված այլ գործիքներ: Դրանք են՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցչի կողմից ներկայացված ԵՄ Հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր Հորիզոն 2020-ը և ՓՄՁ գործիքը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ներկայացուցչի կողմից ներկայացված Արտահանում Եվրամիության երկրներ/Արտահանման տեղեկատու, Գործող արտոնություններ (GSP+), Գերմանիայի տնտեսական միավորման ներկայացուցչի կողմից ներկայացված Արտահանում Գերմանիա, պրակտիկ գործիքներ, Գերմանիայում սարքավորումների ձեռքբերում, մասնակցություն տոնավաճառներին, ավագ փորձագետների ծառայություններ, ինչպես նաև Հայաստանի արտահանման ապահովագրության գործակալության մասնագետի կողմից ներկայացված Արտահանման ապահովագրությունը: Միջոցառմանն ընդհանուր առմամբ մասնակցել են 34 ՓՄՁ-ների և գործարար աջակցություն տրամադրող կառույցների ներկայացուցիչներ, որոնցից 26-ը՝ ՓՄՁ-ների ներկայացուցիչներ են:
- Նույն գործիքները ներկայացվել են նաև ս.թ. հունիսի 8-ին ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքում, որին մասնակցել են 11 ՓՄՁ-ների և գործարար աջակցություն տրամադրող կառույցների ներկայացուցիչներ, ինչպես նաև ս.թ. հունիսի 9-ին՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքում, որին մասնակցել են 22 ՓՄՁ-ների և գործարար աջակցություն տրամադրող կառույցների ներկայացուցիչներ:
- Մեկ այլ տեղեկատվական միջոցառում է կազմակերպվել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: Միջոցառմանը մասնակից 17 ՓՄՁ-ների ներկայացուցիչներին ներկայացվել է ՁԵՑ գործիքակազմը:
- Եվս երկու միջոցառում կազմակերպվել է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի և Սիսիան քաղաքներում: Միջոցառմանը մասնակից համապատասխանաբար 18 և 14 ՓՄՁ-ների և գործարար աջակցություն տրամադրող կառույցների ներկայացուցիչներին ներկայացվել է ոչ միայն ՁԵՑ գործիքակազմը, այլև Արտահանում Եվրամիության երկրներ/Արտահանման տեղեկատու, գործող արտոնությունները (GSP+), ինչպես նաև Մեղրու հատվող սահմանների բարելավումը, հայկական ու իրանական սահմանային գործակալությունների միջև համագործակցության ընդլայնումը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված 7 տեղեկատվական միջոցառումներին մասնակցել են ընդհանուր առմամբ 172 ներկայացուցիչներ ՓՄՁ-ներից ու

գործարար աջակցություն տրամադրող կառույցներից, որոնցից 122-ը՝ ՓՄՁ-ների ներկայացուցիչներ են:

ՁԵՑ Տեղեկատվական նյութեր.

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և գործարարների շրջանում տարածվել է Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի էլեկտրոնային նորությունների ամսական տեղեկաթերթի 12 նոր համար՝ անգլերեն և հայերեն լեզուներով, որոնց հասցեատերերի քանակը գերազանցում է 3000-ը: Տեղեկաթերթը պարունակում է տեղեկատվություն հաղորդակցման կենտրոնի գործունեության, գործարար և տեխնոլոգիական համագործակցության առաջարկների և արտերկրում նախատեսվող գործարար միջոցառումների վերաբերյալ: Բացի այդ, մշակվել և հայ գործարարների շրջանում տարածվել է նաև «Միջազգային գործարար համագործակցության միջոցառումներ» խորագրով տեղեկաթերթի 4 համար, որն իր մեջ ներառում է տեղեկատվություն արտերկրներում տեղի ունեցող միջոցառումների մասին: Այս տեղեկաթերթի հասցեատերերի քանակը ևս գերազանցում է 3000-ը:

բ) ՓՄՁ-երի գործունեության ծավալների ընդլայնում

ՓՄՁ-երի գործունեության ծավալների ընդլայնում (Scaling up for grow) ծրագիրը ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որն իրականացվում է Ձեռնարկությունների եվրոպական ցանցին Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի անդամակցության շրջանակներում: Ծրագիրը մեկնարկել է 2017թ. սեպտեմբերի 1-ին և տևելու է 1 տարի: Ծրագրի հիմնական նպատակն է՝ աջակցել սննդի վերամշակման ոլորտում գործող տեղական ՓՄՁ-ներին դեպի միջազգային շուկա առաջնդման հարցում: Աջակցության հիմնական գործիքներն են՝

- թեմատիկ դասընթացներ
- անհատական խորհրդատվություն
- ՁԵՑ-ի (Ձեռնարկությունների եվրոպական ցանց) գործիքների միջոցով նոր միջազգային գործընկերների որոնում

Որպես թիրախային խմբեր ընտրված են սկսնակ (մինչև 5 տարի գործող) ՓՄՁ-ներ, որոնք գործում են սննդի վերամշակման ոլորտում:

Ակնկալվող արդյունքներն են՝

- Ծրագրի ավարտին միջազգային շուկա դուրս գալու համար անհրաժեշտ ամբողջ գործընթացին, այդ թվում՝ անհրաժեշտ սերտիֆիկացման ստանդարտներին լավատեղյակ վերապատրաստված սկսնակ 15 ՓՄՁ-ներ,
- Ծրագրի ավարտին փորձագետների կողմից սեփական արտադրանքի միջազգայնացման վերաբերյալ անհատական խորհրդատվություն ստացած 10 ՓՄՁ-ներ,
- Ծրագրի ավարտին Միջազգային ստանդարտներին համապատասխան սերտիֆիկացում անցած և սեփական արտադրանքը արտահանելուն պատրաստ 5 ՓՄՁ-ներ:
- Հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացման համար անհրաժեշտ գործողությունների և ընթացակարգերի վերաբերյալ ճանապարհային քարտեզ՝

մշակված նախապես անցկացված դասընթացների և խորհրդատվության արդյունքների հիման վրա:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է ծրագրի շրջանակներում անցկացվող դասընթացի ժամանակացույցը, ինչպես նաև կատարվել է մասնակիցների նախնական հավաքագրում: Նախնական ցուցակում ընդգրկվել են 30 ընկերություններ, որոնց ներկայացնում են սննդի վերամշակման ոլորտը: Փորձագետի օգնությամբ 30 ՓՄՁ սուբյեկտներից ընտրվելու են 15-ը, որոնք մասնակցելու են փորձագետի կողմից անցկացվող դասընթացին՝ եվրոպական ստանդարտների և սերտիֆիկացման գործընթացի վերաբերյալ: Հետագայում դասընթացին մասնակցած 15 ընկերություններից 10-ը ստանալու են անհատական խորհրդատվություն, որոնցից 5-ին տրվելու է անհատական աջակցություն՝ արտադրանքը արտահանելու ուղղությամբ, որը իրականացվելու է ՁԵՑ-ի՝ բիզնեսի միջազգայնացման գործիքների օգնությամբ:

«Պեդական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրով «Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պեդական բյուջեից գումար չի հատկացվել:

8. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում

2017թ. ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ը շարունակել է աշխատանքներ իրականացնել միջազգային/դոնոր կազմակերպությունների հետ համատեղ արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող ծրագրերի, ինչպես նաև նոր ծրագրային առաջարկների մշակման ուղղությամբ:

Առանձին ծրագրերի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները ներկայացվում են ստորև.

ա) ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացնող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր

«Տեղական տնտեսական զարգացում» բաղադրիչ

Կազմակերպվել է փոքր աշխատաժողով Տավուշի մարզի Ենոքավան համայնքում՝ տուրիզմի և հյուրատնային գործունեության զարգացման թեմաներով: Նույն համայնքում

Ենթադանի զարգացման հիմնադրամի հետ համատեղ հիմնվել է «Ենթադանի զբոսաշրջության զարգացման տեղեկատվական կենտրոն»-ը, որի համար ծրագրի շրջանակում վերանորոգվել է կենտրոնի շենքը և կառուցապատվել շրջակա տարածքը: «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետ մշակվել է նաև Ենթադանի զարգացման ռազմավարությունը: Փոքր աշխատաժողովներ են իրականացվել նաև Գեղարքունիքի մարզի Կալավան և Կարմիրգյուղ համայնքներում, Տավուշի մարզի Բերդ համայնքում: Տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համատեղ մի շարք աշխատաժողովներ են իրականացվել Շիրակի և Արագածոտնի մարզերում՝ բացահայտելու տնտեսական ենթակառուցվածքային նախաձեռնություններ, որոնք որպես ծրագիր առաջարկի հայտ խոշորացված համայնքների և համայնքային փնջերի կողմից պետք է մշակվեն և ներկայացվեն ֆինանսավորման Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին:

«Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» ծրագրեր են իրականացվել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան, Կոտայքի մարզի Աբովյան, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Արարատի մարզի Արտաշատ, Գեղարքունիքի մարզի Վարդենիս, Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքներում, ինչպես նաև Շիրակի մարզի Փանիկ և Գեղարքունիքի մարզի Կալավան գյուղերում (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում):

Ծրագրի գերակա ոլորտներում (ջերմոցային և սառնարանային տնտեսություններ, հյուրատնային գործունեություն, պանրի, չրերի, պահածոների և մսամթերքի արտադրություն) տրամադրված տեխնոլոգիական աջակցության շրջանակում ծրագրի 98 շահառու մասնակցել են տեխնոլոգիական դասընթացների և/կամ ստացել են անհատական խորհրդատվություններ իրենց գործունեության ոլորտներում: (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում, *Հավելված 2.4*):

Արտադրական գույքի և սարքավորումների տեսքով դրամաշնորհներ են ստացել 11 շահառու՝ Արմավիրի, Վայոց Ձորի, Շիրակի, Կոտայքի, Սյունիքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերից (*Հավելված 5*):

Մշակվել և հրատարակվել է «Սննդամթերքի մակնշման ուղեցույցը», ինչպես նաև «Սառնարանային տնտեսությունների կառուցման և շահագործման» և «Պատշաճ արտադրական պրակտիկայի և պատշաճ հիգիենայի պրակտիկայի կիրառման ձեռնարկ չորացված միրգ ու բանջարեղեն արտադրողների համար» օրինակելի մոդելները:

«Շուկայի հասանելիության խթանում» ենթաբաղադրիչ

- Շարունակվել են «3 Սերունդ» հովանոցային ապրանքանիշի առաջնդման աշխատանքները: Երևան քաղաքի 2 խոշոր խանութների տարածքում տեղադրվել են «3 Սերունդ» գովազդային ստենդ-տաղավար, որտեղ ներկայացվում են մարզային 7-ից ավելի արտադրողներ, և պարբերաբար կազմակերպվելու են համոտեսներ: Բացի այդ, «3 Սերունդ» ապրանքանիշի ներքո հանդես եկող 6 արտադրողներ մասնակցեցին «Պանարմենիա» ցուցահանդեսին: Արդյունքում, Երևան քաղաքի 350

բնակիչների շրջանում իրականացված հարցումը ցույց է տվել, որ հարցվածների 9%-ը ծանոթ է «3 Սերունդ» հովանոցային ապրանքանիշին:

- 16 հյուրատների համար մշակվել և ներկայացվել է «Ամրագրման հարթակներում հյուրատան գրանցման ուղեցույց», որի օգնությամբ հյուրատները կարող են հստակ նկարագրված քայլերի միջոցով գրանցվել աշխարհում լայն տարածում ունեցող ամրագրման հարթակներում:
- Մշակվել և տարածում է ստացել Ենոքավան համայնքային զարգացման ծրագիրը, ներկայացվելով մասնավորապես ՀՀ կառավարությանը, Հայաստանի զարգացման հիմնադրամին և այլն:
- Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի 12 շահառուներ մասնակցել են «Մարքեթինգի իրականացում սոցիալական հարթակներում» թեմայով դասընթացին և ներկայումս օգտագործում են ստացված գիտելիքները իրենց կորպորատիվ սոցիալական էջերի առաջնորդման նպատակով: 15-ից ավել հյուրատների սեփականատերեր մասնակցել են «Մարքեթինգ և վաճառք հյուրատների համար» դասընթացին:
- Այս բաղադրիչի շրջանակներում իրականացվող միջոցառումները ներառում են նաև անհատական բրենդերի մշակում և առաջնորդում, արժեշղթաների վերլուծություն, Ծրագրի շահառուների մասնակցության ապահովումը տարբեր փառատոններին և ցուցահանդեսներին (օր. Երևան Գինու փառատոնը կամ «Պանարմենիա» ցուցահանդեսը), և այլ միջոցառումներ:

«Փոքր ենթակառուցվածքների զարգացում» բաղադրիչ

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ավարտվել են շինարարական աշխատանքները մի քանի ենթակառուցվածքային ծրագրերի գծով, որոնց թվում՝ ոռոգման համակարգերի մասնակի կամ ամբողջական վերակառուցում Արմավիրի մարզի Սարդարապատ և Արևաշատ, Վայոց Ձորի մարզի Վերնաշեն ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Փանիկ գյուղական համայնքներում: Շիրակի մարզի Մեղրաշեն գյուղական համայնքում ավարտվել է արոտավայրի ջրարբիացման համակարգի կառուցման ծրագիրը:

Բացի այդ, վերակառուցվել է Տավուշի մարզի Վերին Կարմիրաղբյուր գյուղական համայնքի անասնակերի պատրաստման և հացահատիկի գտման կայանը: Տավուշի Բերդ, Չինարի և Գեղարքունիքի Կարմիրգյուղ համայնքների համար ձեռք են բերվել համապատասխանաբար հացահատիկահավաք կոմբայն, սոխի շարքացան և կարտոֆիլ քանդող սարք, կարտոֆիլի և ցորենի շարքացան:

«Հայկական Կաթ», «Մանթաշի Միլենա» և «Ռոզա 1» գյուղատնտեսական կոոպերատիվներում իրականացվել են բարձրաժեք պանրի արտադրության խթանման և արտադրողականության բարձրացման համապատասխան աշխատանքներ: Ընդհանուր առմամբ 2017 թվականի ընթացքում իրականացվել է 12 ենթակառուցվածքային ծրագիր:

«Գյուղական համայնքների բնության պահպանություն» բաղադրիչ

Այս բաղադրիչի շրջանակում աջակցություն է ցուցաբերվում հանքարդյունաբերության բացասական ազդեցության տակ գտնվող համայնքներին՝ բնապահպանական ծրագրերի

մշակման և իրականացման գործընթացում: Բացասական ազդեցության տակ գտնվող համայնքները հնարավորություն ունեն բնապահպանական ծրագրերի իրականացման համար պետական բյուջեից ստանալու նպատակային հատկացումներ, որոնք առաջանում են տվյալ համայնքներում գործող խոշոր ձեռնարկությունների բնապահպանական վճարներից: Այդ վճարները համայնքներ վերադառնում են բնապահպանական ծրագրերի տեսքով: Ծրագրերը մշակվում են համայնքի կողմից և ներկայացվում ՀՀ բնապահպանության և ՀՀ առողջապահության նախարարությունների հաստատմանը:

Հաշվետու ժամանակահատվածում այս բաղադրիչի շրջանակներում իրականացվել է նախկինում հաստատված ծրագրերի իրականացումը, մասնավորապես՝

✓ Զորական և Բերդավան համայնքներում.

- Տեղադրվել են կոշտ կենցաղային թափոնների հավաքման համար կոնտեյներներ: Յուրաքանչյուր համայնքի հանրային վայրերում տեղադրվել են 14 հատ 250 լ տարողությամբ կոնտեյներներ:
- Համայնքների կողմից կառուցվել են աղբամանների տեղադրման հարթակները, ինչպես նաև իրականացվում է աղբահանության գործընթացը:

✓ Բագրատաշենի համայնքում .

- Համայնքային մանկապարտեզի տարածքում կառուցվել է 30 մ² մակերեսով հարթակ բնական քարերից, որը կահավորվել է նստարաններով, աղբամաններով և լուսատուներով:
- Համայնքային մանկապարտեզի տարածքում 3000 մ² մակերեսով տարածքում տնկվել է 50 դեկորատիվ և 150 պտղատու ծառ /արքայանարինջ/:
- Համայնքի կողմից կառուցվել է ոռոգման համակարգ, որի շնորհիվ կոռոզվի ստեղծված կանաչ գոտին:
- Ծրագրի այս բաղադրիչի շրջանակներում վերականգնվել են նաև համայնքային մանկապարտեզի ցանկապատի քանդված և վնասված հատվածները: Պուրակի կառուցումը ավարտվել է նոյեմբերի վերջին:

Ընթացքի մեջ են քննարկումները ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի հետ՝ համայնքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի մշակման վերաբերյալ: Հաստատվելու դեպքու, ծրագիրը կիրականացվի 2018թ. երկրորդ եռամսյակում:

բ) ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագիր

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը 2016թ. դեկտեմբերի 13-ին Եվրոպական Միության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ ստորագրված, համապատասխանաբար, ԵՄ դրամաշնորհի և ազգային համաֆինանսավորման համաձայնագրերի հիման վրա իրականացնում է «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» (Boosting competitiveness of regional SMEs) ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է «Տարածաշրջանային զարգացման պիլոտային

դրամաշնորհային ծրագրի² (Pilot Regional Development Programme (PRDP) – Armenia)» շրջանակներում:

Ծրագրի տևողությունը 24 ամիս է: Ծրագիրն ուղղված է ՓՄՁ-ների մրցունակության աճին և կայուն աշխատատեղերի ստեղծմանը ՀՀ Լոռու, Արմավիրի և Սյունիքի մարզերում:

Ծրագիրն իրականացվում է կոնսորցիումի կողմից: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը գլխավորում է կոնսորցիումը, որին մասնակցում են ևս չորս տեղական կազմակերպություններ. «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ, «Սպիտակ-Ֆերմեր» ՀԿ, «Սյուն» ՀԿ:

Ծրագրի բաղադրիչներն են. «Ենթակառուցվածքների զարգացում», «Ձեռնարկատիրության զարգացում», «Զբաղվածության խթանում»:

Ծրագրի արդյունքում կստեղծվեն ավելի քան 60 կայուն աշխատատեղեր, շուրջ 50 նոր ՓՄՁ-ներ, շուրջ 100 ձեռնարկություններ կստանան բազմակողմանի աջակցություն և կգրանցեն մրցունակության աճ (շրջանառության աճ, աշխատատեղերի աճ, նորարարական մոտեցումներ բիզնեսի կազմակերպման և կառավարման հարցերում, նոր արտադրանք/ծառայություն, նոր շուկաներ և այլն):

Ա.թ. ապրիլի 25-ին կայացել է Ծրագրի առաջին կառավարման խորհրդի նիստը, որի ընացքում ներկայացվել է շուկայի հետազոտության արդյունքները և հաստատվել է Ծրագրի աշխատանքային ծրագիրը:

Բաղադրիչ 1: «Ենթակառուցվածքների զարգացում»

Այս բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Լոռու մարզում **«ճամփեզրյա կայանի»** կառուցում և գործարկում:

Ճամփեզրյա կայանը տարածաշրջանային տնտեսական զարգացմանն ուղղված բազմաֆունկցիոնալ կառույց է, որը կծառայի որպես՝

- **տեղական ապրանքների/ծառայությունների ուղղակի վաճառքի կետ.** կներկայացվի տեղական ՓՄՁ-ների յուրահատուկ արտադրանքը՝ հատկապես սկսնակներինը, որոնք դեռևս ի վիճակի չեն ներկայանալ մեծ շուկաներում:
- **տեղեկատվական կենտրոն այցելուների և զբոսաշրջիկների համար.** տեղեկատվություն կտարածվի մարզի զբոսաշրջային գրավչությունների և ծառայությունների վերաբերյալ:
- **հանգստի կետ անցորդների համար.** անցորդները կկարողանան կանգ առնել, օգտվել հանրային ծառայություններից, կատարել գնումներ և հանգստանալ:
- **շուկայավարման/մոնիտորինգի հարթակ և խորհրդատվական կենտրոն տեղական ՓՄՁ-ների համար.** վաճառվող ապրանքների/ծառայությունների վերաբերյալ հաճախորդների կարծիքները կհավաքագրվեն և կփոխանցվեն

² 2015 թվականի հուլիսի 21-ին Եվրոպական Միության (Հայաստանում ԵՄ պատվիրակություն) և ՀՀ Կառավարության (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության), Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) միջև կնքվել է **Պիլոտային տարածաշրջանային զարգացման դրամաշնորհային ծրագրի փոխըմբռնման հուշագիր:**

արտադրողներին՝ վերջիններիս արտադրանքի/ծառայությունների որակի բարելավման նպատակով:

- **Ժամանակավոր ապաստարան արտակարգ իրավիճակների դեպքում.** կգործի առաջին բուժօգնության կետ:

Կայանի կողմից հետագայում կարող են կազմակերպվել նաև տեղական ապրանքների **ցուցահանդեսներ, տոնավաճառներ, փառատոններ, վարպետաց դասեր** և այլ միջոցառումներ՝ տարածաշրջանի գրավչությունները և տեղական արտադրանքը ներկայացնելու և առաջ մղելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Շուկայի հետազոտություն է իրականացվել ուսումնասիրելու համար համայնքի անդամների, ՓՄՁ-ների, տուրիստական գործակալների և այլ հետաքրքրված կողմերի արձագանքը և իրական ակնկալիքները ճամփեզրյա կայանի ստեղծման և շահագործման նկատմամբ, ինչպես նաև ճամփեզրյա կայանի հետագա գործունեությունը կազմակերպելու համար: Հետազոտությունը տրամադրում է համապարփակ վերլուծություն՝ հիմնավորելով ՀՀ Լոռու մարզում ճամփեզրյա կայանի ստեղծման անհրաժեշտությունը, ինչպես պահանջարկի, այնպես էլ առաջարկի տեսանկյունից և տալիս է նկարագիր ոչ միայն հնարավոր այցելուների, ծառայությունների, ճամփեզրյա կայանի գործունեության վերաբերյալ, այլ նաև տեղական ՓՄՁ-ների, որոնք կհանդիսանան կայանի մատակարար և նրանց հնարավոր օգուտների վերաբերյալ՝ հազեցած գործնական առաջարկություններով:

Ընթացքի մեջ են կայանի նախագծման աշխատանքները, շինարարական աշխատանքները նախատեսվում է մեկնարկել 2018թ. գարնանը:

Բաղադրիչ 2: «Ձեռնարկատիրության զարգացում»

Ծրագրի առաջնահերթություններից է տեղի **ակտիվ երիտասարդների և կանանց** ձեռնարկատիրական կարողությունների զարգացումը: «Հաջող սկիզբ» ծրագրերի միջոցով աջակցություն կցուցաբերվի **սկսնակ գործարարներին՝** իրենց գաղափարների կյանքի կոչման ճանապարհին: Ծրագրին կմասնակցեն շուրջ 270 սկսնակներ: **Գործող 100 ՓՄՁ-ները** կստանան բիզնեսի զարգացման ծառայություններ՝ նրանց մրցունակության և աշխատատեղերի ստեղծման կարողությունների զարգացման նպատակով: Կարողությունների զարգացման միջոցառումներ կիրականացվեն նաև տեղական իշխանությունների և բիզնես ծառայություններ մատուցող տեղական կազմակերպությունների համար՝ տեղական տնտեսական զարգացման և հատկապես ՓՄՁ աջակցության ծրագրերի մշակման և իրականացման հարցերում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- **Տեղեկատվական բնույթի մարզային հանդիպումներ.** Ծրագրի նպատակների և գործողությունների ներկայացման, Ծրագրի թիրախային վայրերում հանրության լայն շրջանակներում տեղեկացվածության բարձրացման, ինչպես նաև պոտենցիալ շահառուների հայտնաբերման և կարիքների նախնական գնահատման

նպատակով Ծրագրի մեկնարկի ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ մարզային և համայնքային մակարդակով: Այս միջոցառումներին ներկա են գտնվել շուրջ 180 մասնակիցներ, հիմնականում տեղական իշխանությունների, տեղական պետական և ոչ պետական կազմակերպությունների, աջակցող կառույցների և բիզնեսի ներկայացուցիչներ:

- **Գործարար ծառայությունների կարիքների գնահատում.** Ծրագրի շրջանակներում նախատեսվող գործարար ծառայությունները առավել թիրախավորված և ըստ կարիքների տրամադրման համար ուսումնասիրվել են շուրջ 150 սկսնակ և գործող ՓՄՁ-ների անհատական կարիքները, կազմվել են պոտենցիալ շահառուների ցանկերը: Ուսումնասիրությունը նաև հնարավորություն կտա սահմանել ելակետային ցուցանիշներ, որոնք կգնահատվեն նաև աջակցություն ստանալուց հետո:
- Ա.թ. հուլիս ամսից մեկնարկել են սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության **«Հաջող սկիզբ» ծրագրերը:** Ծրագրի միջոցով աջակցություն կցուցաբերվի սկսնակ գործարարներին՝ իրենց գաղափարների կյանքի կոչման ճանապարհին: Ծրագիրը բաղկացած է ուսուցողական, խորհրդատվական, տեղեկատվական և ֆինանսական աջակցության բաղադրիչներից: Իրատեսական գաղափար ունեցող սկսնակ գործարարները հնարավորություն կունենան անցնելու առնվազն 80 ժամ տևողությամբ ինտենսիվ դասընթաց և կստանան անհատական խորհրդատվություն: Առավել հաջողված և կենսունակ ծրագրերը հնարավորություն կունենան դիմելու սույն Ծրագրի շրջանակներում նախատեսվող ենթադրամաշնորհներին՝ նոր աշխատատեղ ստեղծելու համար, ինչպես նաև կներկայացվեն ֆինանսավորման Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի սկսնակներին վարկային երաշխավորությունների տրամադրման մեխանիզմով: Ծրագրի ողջ տևողության ընթացքում նախատեսվում է իրականացնել 18 «Հաջող սկիզբ» ծրագրեր, որոնց կմասնակցեն շուրջ 270 սկսնակներ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 9 Ծրագրեր՝ երեքական յուրաքանչյուր թիրախային մարզում (Մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում):
- Տեղական ինքակառավարման մարմինների ներկայացուցիչների և փոքր և միջին բիզնեսին աջակից տեղական կառույցների կարողությունների զարգացման **ուղղված դասընթացների շարք տեղական տնտեսական զարգացման ծրագրերի իրագործման ուղղությամբ:**
Ծրագրի գործընկեր կազմակերպությունների կարողություններով կազմակերպվել են եռօրյա դասընթացներ հետևյալ հիմնական թեմաների շուրջ.
 - ✓ Ինչպես բացահայտել և զարգացնել տարածաշրջանի մրցակցային առավելությունները,
 - ✓ Ինչպես մշակել և իրականացնել տարածաշրջանային զարգացման տեսլականը տեղական ինքնակառավարման մարմինների, գործարարների, ՀԿ-ների, քաղաքացիների և տեղական այլ շահագրգիռ կողմերի հետ միասին,
 - ✓ Ինչ է իրենից ներկայացնում «Մեկ գյուղ մեկ արտադրանք» հայեցակարգը և ինչպես այն կարող է գործածվել տարածաշրջանում,

- ✓ Ինչ է էկոտուրիզմը և ինչպես այն կարող է ազդել տեղական տնտեսական զարգացման վրա,
- ✓ Ինչպես աջակցել սկսնակ և փոքր բիզնեսն աշխատատեղ ստեղծելու և բնակավայրերում կենսամակարդակը բարելավելու գործում,
- ✓ ՏՏՁ նախաձեռնությունների օրինակներ՝ ինտենսիվ այգեգործություն, ջրային և հողային ռեսուրսների կառավարում, այլընտրանքային էներգիայի կիրառում:

Դասընթացները կազմակերպվել են Վանաձոր, Գորիս և Արմավիր քաղաքներում, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են ավելի քան 60 ներկայացուցիչներ մարզպետարանից, տեղական ինքնակառավարման մարմիններից, զբաղվածության տարածքային կենտրոններից, հասարակական կազմակերպություններից, բիզնեսին աջակից այլ կառույցներից:

- Դասընթացներ ՓՄՁ-ների համար:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է դասընթաց «Թվային մարքեթինգ թեմայով», որին մասնակցել են 19 ՓՄՁ-ների ներկայացուցիչներ:

Բաղադրիչ 3: «Զբաղվածության խթանում»

Բիզնես դասընթացներ կկազմակերպվեն շուրջ 210 աշխատանք փնտրողների համար, **փորձի փոխանակման միջոցառումներ** կիրականացվեն առնվազն 45 աշխատանք փնտրողների համար: Թիրախային **ենթադրամաշնորհները** հասանելի կլինեն այն փոքր և միջին ձեռնարկություններին, որոնք կստեղծեն նոր կայուն աշխատատեղեր (նախնական ընտրությունը կիրականացվի «Հաջող սկիզբ» ծրագրերի հաջողված շահառուներից): Դրամաշնորհների արդյունքում կստեղծվի առնվազն 25 կայուն աշխատատեղեր (մեկ նոր աշխատատեղի ստեղծման համար դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 5000 եվրո):

Բաղադրիչի շրջանակներում Զբաղվածության պետական գործակալության հետ սերտ համագործակցությամբ կկազմակերպվեն նաև **աշխատանքի տոնավաճառներ**, որտեղ կհանդիպեն գործատուները և աշխատանք փնտրողները: Կկազմակերպվեն երեք աշխատաքային տոնավաճառներ՝ մեկական յուրաքանչյուր թիրախային մարզում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Ծրագրի ներկայացուցիչները մասնակցել են Վանաձոր և Արմավիր քաղաքներում կազմակերպված աշխատանքի տոնավաճառներին, որտեղ ներկայացվել է Ծրագրի շրջանակներում աշխատանք փնտրողներին տրամադրվող աջակցությունը:
- Ծրագրի կառավարման խորհրդի կողմից հաստատվել են երկու դրամաշնորհային ծրագրեր:

գ) «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համատեղ ծրագիր

Ծրագրի շրջանակներում ընտրված երիտասարդ գործարարներին տեխնիկական և ֆինանսական աջակցությունը տրամադրվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից արդեն իսկ փորձարկված մեթոդների և գործիքների միջոցով, ներառյալ՝ ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասըթացներ, գործարար ծրագրերի մշակում, անհատական խորհրդատվություններ, վարկային երաշխավորությունների տրամադրում առավել իրատեսական գնահատված ծրագրերին և այլն:

Ծրագրի ընդհանուր տևողությունը 44 ամիս էր: Ծրագրի ֆինանսավորումը իրականացվել է Ավստրիայի կառավարության կողմից:

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են երիտասարդների մասնակցությամբ «Սկսնակ գործարարների աջակցության» 7 ծրագրեր (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում):

Ս.թ.հունիսի 15-ին Ծրագրի ավարտի կապակցությամբ տեղի է ունեցել «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ծրագրի ղեկավար կոմիտեի վերջին նիստը, որի ընթացքում ամփոփվել են ծրագրի արդյունքները:

Ընդհանուր առմամբ Ծրագրի ավարտին 25 դասընթացի արդյունքում վերապատրաստվել են 403 երիտասարդներ, որոնք ունեցել են գործարար գաղափարներ կամ արդեն սկսնա հանդիսանում էին որպես ձեռնարկատերեր (ցուցանիշը կատարվել է 134.3%-ով):

դ) «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում Հայաստանում – փուլ - 2» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ (Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն) համատեղ ծրագիր

2016թ. հուլիսի 18-ից մեկնարկել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ համատեղ «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում Հայաստանում – փուլ 2» ծրագիրը, որը հանդիսանում է 2013 -2016 թթ. իրականացված «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում Հայաստանում» ծրագրի շարունակությունը:

Ծրագրի «փուլ 2»-ը ուղղված է Ծրագրի նախորդ փուլի իրականացման ընթացքում ստեղծված դրական արդյունքների և ազդեցությունների տարածմանն ամբողջ երկրում՝ ավելի ընդարձակ առաջադրանքներով, ինչպիսիք են արտահանման ու զբոսաշրջության առաջնորդումը/խթանումը տեղական ու միջազգային շուկաներում:

Ծրագրի հիմնական գործողությունները ներառում են.

- Հայ փորձագետների կարողությունների զարգացում,
- Տեխնիկական աջակցության ցուցաբերում աճի ներուժ ունեցող ՓՄՁ-ներին,
- Հայկական տեղական ապրանքերի առաջնորդում միջազգային շուկաներում,
- Ծրագրի փորձնական իրականացման վայրերի վերաբերյալ զբոսաշրջային փաթեթների առաջնորդում տեղական և միջազգային շուկաների համար,
- Շուկայավարման հարթակների ձևավորում՝ տեղական ապրանքերի և ծառայությունների ներկայացման նպատակով,

- մոնիտորինգ և տեղեկատվության կուտակում՝ տվյալների բազայի ստեղծման միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ավարտվել է «Խորացված ՄԳՄԱ մեթոդի» մշակման գործընթացը, որի արդյունքում նախատեսվում էր ստեղծել սկսնակ և գործող ՓՄՁ-ներին տեխնիկական աջակցության համալիր գործիքակազմ, որը կընդլայնի Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության հնարավորությունները: Այս գործողության շրջանակում ս. թ. մարտի 13-ից 17-ը իրականացվել է «Հայկական խորացված ՄԳՄԱ մեթոդներ – բարձր մակարդակ. հայկական ՄԳՄԱ խորացված մեթոդներ պոտենցիալ արտահանողների համար և զբոսաշրջության առաջնորդ» դասընթացավարների դասընթացը, որին մասնակցել են Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ, գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների և բիզնեսի աջակցության այլ կառույցների 12 (տասներկու) ներկայացուցիչներ: Դասընթացի ավարտին մասնակիցներին տրամադրվել են համապատասխան առաջադրանքներ, որոնց իրականացման արդյունավետության գնահատման հիման վրա տրամադրվել են դասընթացավարի հավաստագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի փորձագետների կողմից մշակվել է սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ՓՄՁ-ների համար սննդի հիգիենայի բարելավման, ինչպես նաև միջազգային ցուցահանդեսներում ներկայացման վերաբերյալ կրթական նյութեր: Ս.թ. հոկտեմբերի 2-6-ը սննդի արտադրության/վերամշակման ոլորտի ՓՄՁ-ների, գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների և Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ ներկայացուցիչների համար (ընդհանուր թվով 18 մասնակից) իրականացվել է դասընթացավարների դասընթաց՝ հիմնված վերոնշյալ նյութերի վրա: Դասընթացի արդյունքում գնահատվել են մասնակից 11 (տասնմեկ) ՓՄՁ -ները, որոնցից 6 (վեց) ՓՄՁ-ներ նախնական ընտրվել են Ճապոնիայում և Սինգապուրում կայանալիք միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու համար (յուրաքանչյուր ցուցահանդեսին 3-ական ՓՄՁ):

Արտահանման խթանմանն ուղղված գործողությունների շրջանակում հաշվետու ժամանակահատվածում ծրագրի փորձագիտական թիմը այցելություններ է իրականացրել Հայաստանի մարզերում գործող և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտների՝ նրանց արտադրական պայմաններին, կարողություններին և արտահանման փորձին ծանոթանալու նպատակով: Հավաքագրված տեղեկատվության հիման վրա մշակվել են համապատասխան գործողություններ, մասնավորապես հայկական ՓՄՁ-ների արտադրանքը Ճապոնիայում և Սինգապուրում կայանալիք միջազգային ցուցահանդեսներին ներկայացնելու համար: Այս գործողության շրջանակներում Ծրագրի թիմը շարունակական աշխատանք է տանում նաև ցուցահանդեսների մասնակից ՓՄՁ-ների արտադրանքի և շուկայավարման նյութերի բարելավմանն ուղղությամբ:

Տեղական զբոսաշրջության խթանման գործողությունների շրջանակում հաշվետու ժամանակահատվածում այցելություններ են իրականացվել մարզեր՝ զբոսաշրջային ռեսուրսների, հյուրընկալության ենթակառուցվածքների, դրանց կողմից մատուցվող

ծառայությունների որակին ծանոթանալու նպատակով: Հավաքագրված տվյալները մշակվել են և կատարվել են համապատասխան եզրակացություններ՝ հետագա գործողությունների պլանավորման համար: Այս գործողության շրջանակում ներկայումս ընթանում են զբոսաշրջային փաթեթների մշակման աշխատանքներ՝ ձևավորված հատուկ ճապոնացի զբոսաշրջիկների համար: Մշակված առաջարկները ներկայացվել են ճապոնական տուր օպերատորներին, որոնցից մեկը փաթեթն ընդգրկել է իր ծառայությունների ցանկում:

Ծրագրի մեկնարկից սկսված հետազոտական աշխատանքներ են իրականացվում ՀՀ Լոռու և Սյունիքի մարզերում ճամփեզրյա կայանների հիմնման գործողությունների շրջանակում:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագիրն աջակցել է 16 (տասնվեց) տեղական սնունդ և ըմպելիքներ արտադրող ընկերությունների՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կազմակերպված «ԱՐՄՊՐՈԴԷՔՍՊՈ – 2017» ցուցահանդեսին մասնակցությանը:

Ա.թ. փետրվարի 14-24-ը ճապոնիայում իրականացվել է վերապատրաստման դասընթաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի 10 (տաս) մասնակիցների համար: Դասընթացը կազմակերպվել է՝ նպատակ ունենալով ներկայացնել տեղական ապրանքանիշերի զարգացման ճապոնական փորձը (ինչպիսին է Կոշու գինու ապրանքանիշը), արտահանման խթանումը, ճամփեզրյա կայանների գործարկումը, ճապոնական արտադրողների կողմից ընդունված որակի և հիգիենայի արդյունավետ կառավարման համակարգերը, քրաուդֆանդինգի միջոցով վերականգնված հին ավանդական տների՝ հյուրատան վերածումը, ինչպես նաև ՓՄՁ զարգացման քաղաքականությունը, զբոսաշրջության զարգացումը, գինու և չրերի ճապոնական շուկայի ներկա իրավիճակը և այլն:

Ա. թ. նոյեմբերի 13-19-ը Թայլանդի թագավորությունում իրականացվել է «ՄԳՄԱ կառավարում» թեմայով դասընթաց: Դասընթացի մասնակիցների խումբը ներառում էր Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի, ինչպես նաև տեղական ՓՄՁ-ների ներկայացուցիչներ՝ ընդհանուր թվով 10 (տաս) մասնակից: Մասնակիցները ծանոթացան ՄԳՄԱ շարժման թափլանդական տարբերակի (ՕՏՕՐ/ՄՏՄԱ – Մեկ տամբոն, մեկ արտադրանք), Թայլանդում հանրային հատվածի կողմից իրականացվող արտադրանքի բարելավման և շուկայավարման ուղղությամբ ՓՄՁ-ների աջակցության գործողությունների, Թայլանդում արտադրանքի մշակման և վաճառքի պայմանների, ինչպես նաև թափլանդական հաջողված զբոսաշրջային արտադրանքի հետ: Դասընթացի ավարտին մասնակիցները ներքին քննարկումների հիման վրա ներկայացրեցին իրենց վերլուծությունները և գործողությունների ծրագրերը՝ ելնելով իրենց դերակատարումից որպես տեղական բիզնես և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ աշխատակից:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում իրականացվել են «Սկսնակ գործարարների աջակցության» 4 ծրագրեր (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում):

Հաշվետու ժամանակահատվածում սննդի արտադրության ոլորտի թվով 12 գործարարների համար իրականացվել է տեխնիկական դասընթաց՝ հիմնված հայկական

ՄԳՄԱ հայեցակարգի վրա: Դասընթացի մասնակիցներին տրամադրվել է նաև խորհրդատվություն սննդի հիգիենայի և սանիտարիայի հիմնարար պահանջների վերաբերյալ:

Ս. թ. սեպտեմբերի 25-ին տեղի է ունեցել Ծրագրի միացյալ համակարգող խորհրդի հերթական տարեկան նիստը, որի ընթացքում ամփոփվել են գործունեության առաջին տարվա արդյունքները և ներկայացվել են հետագա գործողությունները:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի միջոցներով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի տեխնիկական հնարավորությունների զարգացման նպատակով ձեռք են բերվել համակարգչային և գրասենյակային տեխնիկա:

ե) «Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագիր

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը որպես գործընկեր կազմակերպություն մասնակցում է ԵՄ կողմից ֆինասավորվող «Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագրին (Ծրագիր): ERASMUS ծրագրին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հնարավորություն ունեցավ դիմելու COSME ծրագրին Հայաստանի անդամակցության շնորհիվ:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը Ծրագրին մասնակցում է 9 երկրներից ներկայացված և 10 կազմակերպություններից բաղկացած կոնսորցիումով: Կոնսորցիումի համակարգող կազմակերպությունն է Տերասսայի առևտրաարդյունաբերական պալատը (Իսպանիա), իսկ գործընկեր կազմակերպություններն են՝ Օվիեդոյի առևտրաարդյունաբերական պալատը (Իսպանիա), Լեհաստանի Ձեռնարկությունների Չարգացման Գործակալությունը (Լեհաստան), Կրթության և Նորամուծությունների Կենտրոնը (Սլովակիա), Բողզենի Նորամուծությունների Կենտրոնը (Գերմանիա), OXALIS ձեռնարկատերերի միությունը (Ֆրանսիա), Վեզպրեմի առևտրի պալատը (Հունգարիա), Թուրինի առևտրաարդյունաբերական պալատ (Իտալիա), Ֆլանդրիայի առևտրաարդյունաբերական պալատը (Բելգիա) և Հայաստանի ՓՄՁ զարգացման կենտրոնը (Հայաստան):

Ծրագրի նպատակն է նպաստել երիտասարդ ձեռներեցների ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը, մրցունակության բարձրացմանը՝ արտերկրյա համանման ոլորտում գործող փորձառու կազմակերպությունների հետ փորձի փոխանակման և գործնական կապերի հաստատման միջոցով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 16 հայաստանյան գործարարների փորձի փոխանակում եվրոպական համանման կազմակերպությունների հետ, ինչպես նաև 4 եվրոպական գործարարների հյուրընկալում հայաստանյան փորձառու կազմակերպություններում:

Ծրագրի առաջին փուլը մեկնարկել է 2017թ. փետրվարի 1-ից՝ 24 ամիս ժամկետով:

Առ 25.12.2017թ. Ցանցում գրանցված են Ծրագրի պոտենցիալ 21 մասնակիցներ, որոնցից 18-ը՝ որպես Նոր Ձեռնարկատեր, իսկ 3-ը՝ որպես Հյուրընկալող Ձեռնարկատեր:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է հայաստանյան 1 նոր սկսնակ ձեռնարկատիրոջ փորձի փոխանակումը Իտալիայի Պիզա քաղաքում, ևս մեկ նոր ձեռնարկատեր փորձի փոխանակում է անցնում Իսպանիայի Պոնտեվեդերա քաղաքում:

Բացի այդ, հաստատվել է 4 նոր ձեռնարկատերերի փորձի փոխանակումը, ինչպես նաև 3 նոր ձեռնարկատերերի մոտ ընթացիկ փուլում է գտնվում համագործակցության հաստատման (փորձի փոխանակման) գործընթացը:

1 հայաստանյան հյուրընկալող ձեռնարկատիրոջ մոտ ընթացիկ փուլում է գտնվում համագործակցության հաստատման (փորձի փոխանակման) գործընթացը (Հավելված 7):

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ մարզերում և Երևան քաղաքում կազմակերպվել են բազմաթիվ իրազեկման/տեղեկատվական հանդիպումներ Ծրագրի թիրախային խմբերի համար:

գ) Նիդերլանդների ավագ փորձագետների (PUM) կազմակերպության հետ համատեղ ծրագիր

2016թ. սեպտեմբերի 20-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Նիդերլանդների ավագ փորձագետների (PUM) ոչ-առևտրային կազմակերպության միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր: Փաստաթղթի հիմնական նպատակն է նպաստել հոլանդացի ավագ փորձագետների փորձի և գիտելիքների տարածմանը Հայաստանում գործող ՓՄՁ-ների շրջանում: Ծրագրի առաքելությունն է հոլանդացի փորձագետների կողմից կամավորական սկզբունքով ՓՄՁ-ներին տրամադրել փորձագիտական և տեխնիկական խորհրդատվություն՝ խրախուսելով միջազգային շուկաների հասանելիությանը, ինչպես նաև հայկական ՓՄՁ-ներում միջազգային լավագույն փորձի ներմուծմանը: Համաձայնագրում ամրագրված դրույթներին համապատասխան, հոլանդացի ավագ փորձագետները իրենց գործունեությունը կիրադրեն Հայաստանում հետևյալ հիմնական ուղղություններով. պանրագործություն, շուկայավարում, զբոսաշրջություն, ջերմոցային տնտեսություններ, չորացված մրգերի/բանջարեղենի արտադրություն և այլն: Տրամադրվող խորհրդատվական/տեխնիկական աջակցության ուղղությունը որոշվում են ՓՄՁ-ների կարիքների հիման վրա: Տվյալ ծրագրի շրջանակներում որպես թիրախային խմբեր հիմնականում լինելու են ագրոբիզնեսի և զբոսաշրջության ոլորտներում ներգրավված փոքր ձեռնարկությունները:

Համաձայն նախանշված գործողությունների ծրագրի՝ 2017թ. ապրիլ ամսվանից սկսած ՀՀ մարզերի պանրագործության, հուրատնային գործունեության, սննդի վերամշակման և սպանդանոցային բիզնեսի կազմակերպման ոլորտներում գործունեություն ծավալող 97 սկսնակ գործարարների և ՓՄՁ սուբյեկտների համար կազմակերպվել են «Գառուդա և Մոցառելա պանիրների պատրաստման տեխնոլոգիա», «Հյուրատնային և օթևանային բիզնեսի վարում», «Փաթեթավորման զարգացում» և «Վտանգների վերլուծություն և հսկման կրիտիկական կետերը», «Սպանդանոցային բիզնեսի կառավարում» թեմաներով 5 դասընթացներ (Հավելված 2.4): Դասընթացները կազմակերպվել են Նիդերլանդներից ժամանած պանրագործության, հյուրատնային գործունեության, սննդի վերահսկողության և սպանդանոցային բիզնեսների կառավարման գործում մասնագիտացված 4 հոլանդացի փորձագետների կողմից:

Բացի կազմակերպված դասընթացներից, գործարարներին տրամադրվել է անհատական խորհրդատվություն բիզնեսի զարգացման և ընդլայնման վերաբերյալ (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում):

Այլ ընթացիկ աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել նաև «2014-2020թթ. Սևծովյան համագործակցության ծրագրի» շրջանակներում նոր առաջարկով հանդես գալու ուղղությամբ: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը մասնավորապես որպես ծրագրի գործընկեր է հանդես եկել ներկայացված 4 ծրագրերում: Նշված ծրագրերը մշակվել են օրգանական գյուղատնտեսական մթերքների, տուրիզմի, ինչպես նաև առևտրային ցանցի ոլորտներում: Նշված ծրագրերում որպես ղեկավար գործընկեր են հանդես եկել Մոլդովայում, Բուլղարիայում և Հունաստանում գործող կազմակերպություններ: Ներկայացված 1 ծրագրում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հանդես է եկել որպես ծրագրի ղեկավար գործընկեր: Այս ծրագրի գործընկերներ են՝ մեկ այլ կազմակերպություն Հայաստանից, ինչպես նաև կազմակերպություններ Հունաստանից և Վրաստանից: Վերջին ծրագրի հիմքում ընկած է էկո գյուղերի ստեղծման գաղափարը:

«Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» (SMEDA) ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի հետ համագործակցությամբ 10 հայաստանյան սկսնակ ընկերություններ (սթարթափներ) մասնակցեցին Իսպանիայի Սալամանկա քաղաքում ապրիլի 26-27-ը կայացած “Startup Olé” կոնֆերանսին: “Startup Olé” երկօրյա տեխնոլոգիական և ձեռնարկատիրական ուղղվածության միջոցառման ընթացքում 10 հայկական ընկերություններ կապեր ստեղծեցին սթարթափ ընկերությունների հետ, ինչպես նաև ձևավորեցին փոխշահավետ գործընկերություն վերոնշյալ ընկերությունների հիմնադիրների և սերիական արտադրություն իրականացնող ձեռնարկատերերի միջև, որոնք կարող են հանդես գալ իբրև մենթոր և բիզնես խորհրդատու՝ օգնելով վերջիններիս ընդլայնել իրենց գործունեությունը: 10 հայաստանյան սկսնակ ընկերության (յուրաքանչյուրից՝ մեկական ներկայացուցիչ) բացառիկ հնարավորություն ընձեռվեց ներգրավվել եվրոպական սթարթափ էկոհամակարգում: Կոնֆերանսի շրջանակներում հայկական ընկերություններին հնարավորություն ընձեռնվեց նաև մասնակցել ծրագրերի մրցույթ-արեզնետացիաներին, ինչպես նաև խոշոր ընկերությունների և ներդրողների հետ համագործակցության հաստատմանը նվիրված միջոցառմանը:

9. Աջակցության այլ ծրագրեր

ա) Գյուղատնտեսական տեխնիկայի և հարակից սարքավորումների ձեռքբերմանն աջակցության ծրագիր

Համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի N 650-Ն որոշման՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը 2015 թվականին կնքել է պայմանագրեր Բելառուսի

Հանրապետության «Մինսկի տրակտորների գործարան»-ի և Ռուսաստանի Դաշնության «Ռոստտելմաշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ, կոմբայններ ու տրակտորներ ձեռք բերելու և ՀՀ քաղաքացիներին, համայնքներին ու կազմակերպություններին համապատասխան պայմաններով տրամադրելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում 2013-2015 թվականների ընթացքում ներկրված գյուղատնտեսական տեխնիկայի մնացորդից վաճառվել է 1 հացահատիկահավաք կոմբայն, 1 հատ ճշգրիտ ցանքի սերմնացան, 2 հատ կուլտիվատոր, 1 հատ կարտոֆիլի շարքացան (*Հավելված 8*):

Ս.թ. մարտի 25-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ստորագրեցին հուշագիր՝ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրի շրջանակում: Ծրագրով գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվելիք գյուղատնտեսական տեխնիկան կմատակարարվի Եվրասիական տնտեսական միության անդամ և այլ երկրներում գյուղատնտեսական տեխնիկա արտադրող հայտնի ընկերություններից, որը հնարավորություն կտա նաև առաջիկայում Հայաստանի Հանրապետությունում ձևավորել գյուղատնտեսական տեխնիկայի սպասարկման կենտրոններ: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը մարզային մասնաճյուղերի միջոցով նպաստելու է գյուղտեխնիկայի ձեռքբերման վերաբերյալ տեղեկատվության տարածմանը: Մասնաճյուղերի աշխատակիցները գյուղտեխնիկա ձեռք բերել ցանկացողներից կրնդունեն հայտերը, կիրականացնեն համապատասխան փաստաթղթավորում և կապահովեն հայտերի հետագա ընթացքը՝ սահմանված կարգով:

բ) «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցում» ծրագիր

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N1017-Ն որոշման՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամին հատկացվել է 150,0 մլն ՀՀ դրամ գումար ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի սուբսիդավորման նպատակով:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 662-Ն և 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N1017-Ն որոշումներով՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից մշակվել է «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցման կարգ», ըստ որի, որպես թիրախ ընտրվել են ՀՀ գյուղական համայնքների ՓՄՁ սուբյեկտներ, որոնց շրջանառությունը չի գերազանցում 10,0 մլն ՀՀ դրամը: Բացառության կարգով աջակցությունից կարող են օգտվել են ՀՀ մարզերի քաղաքային համայնքների առևտրի կազմակերպման կենտրոններում գործող ՓՄՁ սուբյեկտները:

2017 թվականի ընթացքում «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցման» ծրագրի շրջանակներում սուբսիդավորվել է ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված 126 հայտ: Սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 3,920,000 ՀՀ դրամ (*Հավելված 9*):

10. «Պեղական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների վարձատրությանը 2017 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից ուղղվել է 152,600,000 ՀՀ դրամ: